Azg
Ազգ
18 ՆՈՅԵՄԲԵՐ 2006 ՇԱԲԱԹ 221 (3624)

Սպանվել է ՈՀՄ Մուրմանսկի ստորաբաժանման ղեկավար Արթուր Հարությունյանը

Նոյեմբերի 16-ին, երեկոյան 8-ի սահմաններում Մուրմանսկում՝ իր տան մոտ դիմահար կակոցով սպանվել է Ռուսաստանի հայերի միության Մուրմանսկի մարզային համայնքի նախագահ, հայտնի գործարար Արթուր Հարությունյանը: Սպանությունից հետո հանցագործը հասցրել է նստել Հարությունյանի տան շքամուտքի մոտ կանգնած մեքենան եւ փախել, մինչ դեպքի վայր հասած ոստիկանության պարեկային աշխատակիցները կրակել են նրա ուղղությամբ: Ինչպես տեղեկացանք Ռուսաստանի հայերի միությունից, 42-ամյա Արթուր Հարությունյանին էր պատկանում Մուրմանսկի սոցիալական կոմերցիոն բանկի բաժնետոմսերի 70 տոկոսը: Որպես սպանության հիմնական վարկած նշվում է Արթուրի ձեռներեցական գործունեությունը, բացառելով այս սպանության ազգային դրդապատճառը: Արթուր Հարությունյանն ուներ 17-ամյա որդի եւ 6 ամսական դուստր:

Ազգային անվտանգության ռազմավարության փաստաթուղթն ամբողջանում է

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նոյեմբերի 27-ին Ազգային ժողովի պատգամավորները կքննարկեն ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության փաստաթուղթը, որն անցնելով համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչներից եւ պատգամավորներից կազմված հանձնաժողովի 7 նիստերով եւ երեկ մի լրացուցիչ անգամ քննություն բռնելով գիտությունների ազգային ակադեմիայում՝ ամբողջացել ու մեթոդաբանությամբ եւ բնույթով համապատասխան է դարձել ուրիշ երկրների նմանատիպ փաստաթղթերին: Սակայն տպավորություն չստեղծվի, որ այդ փաստաթուղթը Ազգային ժողովում օրենքի տեսք է ստանալու, ընդամենը պատգամավորները շուռումուռ են տալու նրա դրույթները, որից հետո փաստաթուղթը գնալու է երկրի նախագահի մոտ՝ հավանության: Ապա եւ հաստատվելու է կառավարության այն նիստում, որը վարելու է նախագահը: Ահա այս բոլորից հետո մեր անվտանգության ռազմավարության վերաբերյալ փաստաթուղթը պարտադիր է դառնալու բոլոր գերատեսչությունների ղեկավարների եւ պաշտոնյաների համար, որոնք, որքան էլ զարմանալի է, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի վկայությամբ, նույն հարցի վերաբերյալ հաճախ տարբեր տեսակետներ էին արտահայտում: Փաստաթղթի ընդունումից հետո նրանք այլեւս նման բան անել չեն կարող: Իսկ Ս. Սարգսյանը ակադեմիկոսներին եւ գիտնականներին ներկայացնելով փաստաթուղթը, տեղեկացրեց, թե այն վերջին համալսարանական քննարկումից հետո բավական դրական փոփոխություններ է կրել՝ ընդհանուր առմամբ 615 իմաստային եւ խմբագրական առաջարկություններից ներառելով զգալի մասը:

Տես էջ 3

ՕՍԿԱՆՅԱՆԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊԵԼՈՒՅ ՀԵՏՈ

Փաստորեն Մամեդյարովը դժվար է հասկանում

Նոյեմբերի 14-ի Օսկանյան-Մամեդյարով բրյուսելյան հանդիպումը, պարզվում է, Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովին օգնել է ավելի լավ հասկանալ «այն սկզբունքները, որոնց վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվել»: «Ազատության» ադրբեջանական ծառայությանը Մամեդյարովը հայտնել է, թե Ադրբեջանի համար կարեւոր է հասկանալ Հայաստանի՝ ապագայի մասին պատկերացումը: Ընդգծելով Եվրոմիության նոր հարեւանության գործողություններին ծրագրերի ստորագրման հանգամանքը, Մամեդյարովը նշել է, թե այդ ուղղությամբ շարժվելու դեպքում պարզ կդառնա, որ «հնարավոր չէ «Կալաշնիկովի» միջոցով փոխել սահմանները եւ մարդկանց տեղահանելու միջոցով որոշել որեւէ տարածքի ճակատագիրը»:

Այնքանով, որքանով էլմար Մամեդյարովը դժվարությամբ է հասկացել չհամաձայնեցված սկզբունքները, թերեւս նույնքանով չի ընկրկում, որ «Կալաշնիկովով» հարց չլուծելու մասին Ադրբեջանը պետք է լավ մտածի:

Մերզլյակովը ներքաղաքական կանխատեսումնե՞ր է անում

Խոսելով 2007 եւ 2008 թթ. Հայաստանում եւ Ադրբեջանում տեղի ունենալիք ընտրությունների՝ ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացի վրա բացասաբար ազդելու մասին, ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Յուրի Մերզլյակովը ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին հայտնել է, թե «... առանցքային քաղաքական դեմքերը, ովքեր հայկական կողմից վերջին 10 տարում մասնակցել են բանակցություններին, հաջորդ տարի սկսելու են դուրս մնալ բանակցային գործընթացից»: Հետաքրքրական է, որ Մերզլյակովը ներքաղաքական իրավիճակի տարօրինակ կանխատեսումներ է անում, հատկապես որ բանակցային գործընթացին մասնակցել են միայն Ռոբերտ Քոչարյանը եւ Վարդան Օսկանյանը: Միեւնույն ժամանակ ստացվում է, որ ադրբեջանական «առանցքային քաղաքական դեմքերը» մնալու են բանակցային գործընթացում:

SOS արագաճ բարդիների համար

Նախագծի իրականացումը ապառնալիքի տակ է

Արմավիրի մարզպետարանը վաճառել է գիտափորձնական ագրոտեխնիկական ինստիտուտին տրամադրված տնկարաստեղծից 12 հա տարածք: Երեկ այս մասին տագնապ էր հնչեցրել Ամերիկահայ ճարտարագետների եւ գիտնականների ընկերակցությունը:

Տնկարաստեղծի 52 հա տարածքի վրա տնկվել են ամերիկյան եւ կանադական արագաճ բարդիների կլոններ: Այդ բարդիները տնկվել են փորձարարական նպատակով՝ Հայաստանում կարճ ժամանակում արագաճ բարդիներից մեծաքանակ բնափայտ ստանալու եւ մեր անտառները փրկելու անխնա հատումներից: Արագաճ բարդիների նախագծի վրա ընկերակցության հետ աշխատում են Բուսաբանության ինստիտուտը եւ Հայանտառը: Նախագծի իրականացման համար հսկայական ծախսեր են արվել մինչ օրս, եւ կլոններից շատերը գերազանց արդյունքներ են տվել:

«Այս հողերի մեծ մասի գնողը մի նախարար է, իսկ մի ուրիշ մասը գնել է Արմավիրի քաղաքապետը: .... Մեզ անհասկանալի է, թե ինչպես կարելի է մինչ այժմ կատարված աշխատանքներն անտեսել եւ նախատեսված արդյունքին չհասած՝ այս տնկարաստեղծը վաճառել, որի հետեւանքը ծառերի ոչնչացումը կլինի», գրված է հայտարարության մեջ:

Ընկերակցությունը պահանջում է ՀՀ կառավարությունից «12 հա հողամասի արտրինի վաճառքը չեղյալ համարել եւ դրա վկայականն անմիջապես տրամադրել բուսաբանության ինստիտուտին՝ համաձայն կառավարական որոշման»: Ա.Գ.

Անթալիայում հինգ տարվա ուշացումով գումարվել է թուրքալեզու պետությունների գագաթաժողովը

Երեկ Անթալիա քաղաքում գումարվել է թուրքալեզու պետությունների հերթական՝ 8-րդ գագաթաժողովը: Հինգ տարվա ընդմիջումից հետո հրավիրված այս գագաթաժողովին նախագահի մակարդակով, բացի Թուրքիայից մասնակցում են միայն Ադրբեջանը, Կիրգիզիան եւ Ղազախստանը: Թուրքմենիան ներկայացել է դեսպանի մակարդակով, իսկ Ուզբեկստանը հրաժարվել է մասնակցությունից:

Այնուամենայնիվ, բացման խոսքում Թուրքիայի նախագահ Սեզերը հարկ է համարել ընդգծել, որ գագաթաժողովը, անկախ ուշացումից, թուրքական աշխարհի համերաշխությանն ու համագործակցությանը նպաստող առաջընթաց քայլ է: Գագաթաժողովում արծարծվել է նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցը: Դրա առնչությամբ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն ասել է, որ ավելի մեծ աջակցություն են ակնկալում թուրքական աշխարհից եւ միջազգային հանրությունից: Միաժամանակ նա ներկաներին հիշեցրել է Ադրբեջանի գրավյալ տարածքների մասին:

Ալիեւին արձագանքել է միմիայն Սեզերը, հավաստելով, որ Ղարաբաղի հարցում Թուրքիան կբարունակի աջակցել Ադրբեջանին: Ինչ վերաբերում է Ղազախստանի նախագահ Նազարբաեւին եւ Կիրգիզիայի նախագահ Բակիեւին, նրանք ըստ երեւույթին անտեսել են Իլհամի աջակցության ակնկալիքը, որ թուրքական հանրային հեռուստատեսությունը գագաթաժողովին անդրադառնալիս նրանց արձագանքի մասին որեւէ տեղեկություն չի հայտնում:

Հ. Ղ.

Վառելիքային ճգնաժամ «Զվարթնոցում»

«Զվարթնոց» օդանավակայանում ավիացիոն վառելիքի պակաս կա: Նոյեմբերի 16-ից օդանավակայանում վառելիքի սահմանափակումներ են մտցրել հայկական ավիաընկերությունների ինքնաթիռների համար: Երեւանից չվերթերի եւ վերադարձի ժամանակ ինքնաթիռները լիցավորվում են միջանկյալ օդանավակայաններում: Օդանավակայանի վառելիքի մատակարար «Միկա լիմիտեդ» ընկերությունը դեռեւս նոյեմբերի սկզբին պետք է տրամադրեր 10 հազար տոննա վառելիք, որից օդանավակայան է հասցվել միայն 2,5 հազարը, մնացյալը պետք է լրացվեր մինչեւ նոյեմբերի 15-ը:

Ա. Հ.

Թղթով ամրագրված օրենքի եւ իրականության միջեւ

Հայաստանը «Հակածխախոտային համաշխարհային դաշինքի» անդամ-երկրներից է, սակայն ծխող բնակչության հանակով բավականին բարձր ցուցանիշ է արձանագրում (վերջերս նկատվում է ծխող կանանց թվի ավելացում): Չնայած ՀՀ օրենսդիր բարձրագույն մարմինը ընդունել է «Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» օրենքը, բայց կիրառվո՞ւմ են արդյոք այս եւ առհասարակ թղթով ամրագրված որոշումները մեզանում: Որ օրինազանցության մեջ անգերազանցելի ենք, կյանքը հաստատում է ամեն քայլափոխի, թեկուզ՝ վերջին օրերին տրանսպորտային կանգառումները կանոնակարգող փորձերը:



Ծխելու դեմ տարվող պայքարին՝ որպես առողջապահական եւ էկոլոգիական լուրջ խնդրի, մեր հասարակության ոչ այնքան ակտիվության մասին են վկայում վերջերս մայրաքաղաքի բնակչության մի հատվածի շրջանակներում անցկացված սոցիալական հարցումների արդյունքները: «Հակածխախոտային քարոզարշավ դեռահասների շրջանում» ծրագրի շրջանակներում հուլիսին մի շարք հասարակական կազմակերպություններ անց են կացրել մոնիտորինգ՝ «Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» օրենքի վերաբերյալ: Այն իրականացնելու համար «Հասարակական երկխոսության եւ զարգացման» կենտրոնի տրամադրած դրամաշնորհի (5,5 մլն դրամ) կեսը, որեւէ հեռուստաընկերության հետ համագործակցությամբ ստեղծված 1 ֆիլմի, 2 թոք-շոուների եւ 5 կլիպերի է հատկացվել:

Տես էջ 2

Հայկական հեռուստատեսային գովազդի խամ ու խողան դաշտում

Հայաստանում սերտիֆիկացված, էկոլոգիապես մաքուր անուն չկա, բայց գովազդվում է

«Սպառողների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը մայիսին դիմել է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովին՝ նշելով գովազդի օրենքի բազմաթիվ խախտումներ: Պատասխանել են, որ ամեն ինչ կարգին է, որ վերջին մեկ տարում գովազդի մասին օրենսդրության խախտման դեպքեր չեն հայտնաբերվել: Որեւէ բան ասելու նախաձեռնություն չի ցուցաբերվել, եւ կազմակերպության նախագահ Աբգար Եղոյանը երեկ որոշել էր լրագրողներին ներկայացնել այն ամենը, ինչին ամեն օր ականատես ենք բոլորս բազմաթիվ հեռուստաալիքներով:

Երբ նայում ես հայկական գովազդները, հաճախ այն տպավորությունն ես ստանում, որ գովազդ պատրաստող ֆիրմաներում հայերենի իմացությամբ մասնագետներ, որպես կանոն, բացակայում են, կամ էլ դրանց ներգրավումը գովազդ պատրաստելու աշխատանքներին ավելորդ ծախս ու շռայլություն է համարվում: Շատ հաճախ ռուսական շեշտն ու առոգանությունը, փողոցային բառ ու բանը ժարգոնի տեսքով ոտղակի մտնում է եթեր, ոճական, քերականական սխալներով բառերն ու արտահայտությունները ցավ են պատճառում հայերենի հանդեպ իմիջիայլոց, արհամարհական վերաբերմունքի պատճառով:

Աղավաղելով հեռուստադիտողների դյուրահավատությունը, բազմիցս գովազդվում է, որ այս կամ այն սննդամթերքն էկոլոգիապես մաքուր է: Աբգար Եղոյանը հայտարարեց, որ «էկոլոգիապես մաքուր սնունդ արտահայտությունն ակնհայտ սուտ է, քանի որ Հայաստանում դեռեւս գոյություն չունի սերտիֆիկացված, էկոլոգիապես մաքուր (բիո, օրգանիկ) սննդամթերք»:

Առանց հայերեն մակնշումների նորածիններին հասցեագրված HiPP թեյերի վնասակարության մասին ադեն զգուշացրել ենք մեր նախորդ հրապարակումներից մեկում: Այդ ֆիրմայի մանկական սնունդն օր ու գիշեր գովազդվում է եթերում:

Գովազդի մասին օրենքն արգելում է ալկոհոլային թունդ (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի տոկոս) խմիչքների գովազդը: Մեր հեռուստաալիքներով հաճախակի գովազդվում է թունդ ալկոհոլային խմիչքի ապրանքանիշը, որ հոգեբանական նույն ներգործությունն ունի, ինչ խմիչքի գովազդը:

Կազմակերպությունը նաեւ բազմաթիվ բողոքներ է ստանում սպառողներից, որ ռուսական հեռուստաալիքների գովազդային դադարների ընթացքում ցուցադրվող հայկական գովազդների տեւողությունը շատ հաճախ շատ ավելի երկար է ռուսական գովազդների տեւողությունից, եւ արդյունքում՝ ռուսական հաղորդումներն ու ֆիլմերն ուշ են միացվում:

Հետաքրքրական է, եթե հանձնաժողովը երբեւէ մոնիտորինգ է անցկացրել, ինչ թերություններ ու առավելություններ է բացահայտել հայկական եթերում: Եվ ինչու չեն հրապարակվում այդ ուսումնասիրությունների արդյունքները, եթե երբեւէ իրականացվել են:

Ով է ի վերջո, վնասակար խրախճանքի դեմն առնելու:

Սպառողների իրավունքների պաշտպանության միությունն առաջարկում է փոփոխություններ կատարել գովազդի օրենքում, որպեսզի մշակվեն ավելի գործուն մեխանիզմներ օրենքի պահանջներն արհամարհողների դեմ:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԹԱՐՅԱՆ

Ռուսաստանից գումարը կփոխանցեն ռուբլով, Հայաստանում կստանան դրամով

Նոր ծառայություն է առաջարկում «Յունիստրիմ» համակարգը

«Յունիստրիմ» փոխանցումների համակարգն առաջարկում է նոր ծառայություն, որը կհետաքրքրի Հայաստանի բնակչության այն հատվածին, որը հարազատներ ունի Ռուսաստանում եւ այնտեղից դրամական փոխանցումներ է ստանում: Համակարգն արդեն սկսել է Ռուսաստանից փոխանցված ռուսական ռուբլին կամ այլ արժույթը Հայաստանի սպառողին հայկական դրամով տրամադրելու ծառայության մատուցումը: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ մանրամասներ հաղորդեցին հայկական «Յունիբանկի» եւ մոսկովյան «Յունիստրիմ» բանկի բաժնետեր Գագիկ Ճահարյանը եւ Հայաստանի Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նոր ծառայությունը, ելույթ ունեցողների բնորոշմամբ, շատ հարմար է ինչպես բանկի, այնպես էլ փոխանցողների եւ ստացողների համար: Գումարը փոխանցողը, որ հիմնականում իր եկամուտը ստանում է ռուսական ռուբլով, հարկադրված չի լինի այն փոխանակել դոլարով, իսկ ստացողը՝ դոլարը դրամով: Փոխանակման ընթացքում երկու կողմն էլ կորցնում են: Բացի այդ, փոխանակումը կատարվում է առանց միջնորդավճարի: Այս հանգամանքը «Յունիբանկի» վարչության նախագահ Վարդան Աբոյանը բացատրեց այն հանգամանքով, որ բանկն իր եկամուտը կստանա փոխանակման ժամանակ, եւ դա հնարավորություն կտա աշխատելու 0 տոկոս միջնորդավճարով, ինչպես նաեւ նվազեցնել կանխիկ դոլարի

գնումը, քանի որ Կենտրոնական բանկը դրամն այդ դեպքում տրամադրում է դարձյալ 0 տոկոսով: Ռուբլուց կամ արժույթից դրամի փոխանակումը բանկը կկատարի շուկայական փոխարժեքով: Նոր ծառայությունը, բացի շահավետ լինելուց, նաեւ պարզեցված է:

ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը դրամական այս փոխանցման նպատակահարմարությունը կարեւորելով, ընդգծեց այն հանգամանքը, որ սա նաեւ միջոց է ուղղված Հայաստանում դոլարացման նվազեցմանը:

Գագիկ Ճահարյանը տեղեկացրեց, որ դրամական փոխանցումների այս համակարգը նորույթ է նաեւ Ռուսաստանի համար: Բանկն այժմ ծրագրում է ռուբլու փոխանակմամբ ազգային արժույթների փոխանցումներ նաեւ Ուկրաինայի, Ղազախստանի եւ Կիրգիզիայի հետ:

Դեռեւ Հայաստան մասնավոր փոխանցումների մասին խոսելով, Վարդան Աբոյանը հայտնեց, որ միայն «Յունիստրիմ» համակարգով այդ փոխանցումները նոյեմբերի 1-ի դրությամբ կազմել են 313 մլն դոլար, իսկ միայն նոյեմբերին փոխանցվել է եւս 25 մլն դոլար: Ասվածին ավելացնելով, Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ 2005 թ.-ին մասնավոր փոխանցումների տեսքով Հայաստան է մուտք գործել 900 մլն դոլար: Դրանց 70 տոկոսը ուղարկվել է Ռուսաստանից, 25 տոկոսը՝ ԱՄՆ-ից, 5 տոկոսը՝ այլ երկրներից: Այս տարի ակնկալվում է, որ մասնավոր փոխանցումների ծավալը կավելանա 30 տոկոսով, բայց ըստ երկրների համամասնությունը կպահպանվի:

Տեղեկացնելով, որ մամուլի ասուլիսը հրավիրված է «Յունիբանկի» գործունեության հնգամյակի կապակցությամբ, Գագիկ Ճահարյանն ասաց, որ բանկի 4 մլրդ դրամ կազմող կանոնադիր կապիտալը մինչեւ տարեվերջ կկրկնապատկվի: «Յունիբանկը», ըստ նրա հիմնական բաժնետիրոջ, առաջատարն է Հայաստանում հիպոթեկային վարկերի տրամադրման առումով եւ ծրագրում է ապագայում ավելացնել դրանց ծավալները:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հասանք Պարզ լճին

Արդեն հաստատվել է 70 հազար դոլարանոց բնապահպանական միջոցառման ծրագիր, որով ներդնողը պետք է Դիլիջանի Պարզ լճի մաքրման ու աղտոտված շրջակայքի կանոնակարգման աշխատանքներ կատարի: Հայտնի է, սակայն, որ դեռեւս չի ավարտվել Դիլիջան ազգային պարկի քարտեզագրումը, եւ ըստ ամենայնի, աշխատանքները պիտի կատարվեն նախկին սահմանների շրջանակում: Հիշեցնենք, որ Դիլիջանի նախկին՝ արգելոցային կարգավիճակն արգելում էր մարդկային որեւէ գործունեություն այստեղ:

Պարզ լիճը շվեյցարական բնապատկեր հիշեցնող տուրիստական գեղատեսիլ անկյուն է Դիլիջանում: Այս տարածքն իսկապես անխնամ է, իսկ երկար տարիներ ուշադրությունից դուրս լիճն իսկապես ծերանում է: Արդյոք ներդնող գործարարը էկոլոգիական խնդիրներ կլուծի, թե՞ նոր ծրագիրը կավարտվի ծառերի նոր սպանդով, եւ ընդամենն այս տարածքում նոր սրճարան կամ ռեստորան կբարձրանա:

Կ.Դ.

ՀԱԿԻՐՄ

Ֆելինիի եւ Գուերայի անվան մրցանակ հայ կինոռեժիսորին

Նոյեմբերի 15-ին Իտալիայի արվեստի գործիչների անկախ ընկերությունը եւ «Տոնինո Գուերա» հիմնադրամը միջազգային կինոարվեստում նշանակալի ներդրման համար հայ կինոռեժիսոր Ռուբեն Գետոյանց-Կեւորկովին արժանացրել է Ֆեդերիկո Ֆելինիի եւ Տոնինո Գուերայի անվան «Ամարկորդ» մրցանակին: Պարգեւատրումը տեղի է ունեցել Իտալիայի Պենաբիլի կինոգործիչների քաղաքում, որտեղ պարգեւը հանձնել է ինքը՝ Տոնինո Գուերան:

Հայաստանում աղրում է Հայոց ցեղասպանությունը վերապրած մոտ 410 մարդ

Հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանում աղրում է Հայոց ցեղասպանությունը վերապրած մոտ 410 մարդ: Ըստ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կենսաթոշակային ապահովության բաժնի պետ Ռոզա Մկրտչյանի՝ հաջորդ տարվա հունվարի 1-ից այս անձանց կենսաթոշակին տրվող հավելման չափը կկազմի 25 հազար դրամ:

ՀՀ կառավարության երեկվա նիստում փոփոխություն է կատարվել 2004 թվականին ընդունված ՀՀ կառավարության որոշման մեջ, որով Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան Թուրքիայի այլ վայրերում մինչեւ 1915 թ. (ներառյալ) ծնված եւ Հայոց ցեղասպանությունը վերապրած անձանց կենսաթոշակին տրվող հավելման չափը սահմանվել է 25 հազար դրամ՝ ներկայիս 5 հազար դրամի փոխարեն:

«Տոյոտա» Ախալքալաքի շրջանային ոստիկանապետին

Ախալքալաքի շրջանային ոստիկանության պետ Սամվել Պետրոսյանը, «Ջավախք-Ինֆոյի» տեղեկացմամբ, վաղ պետությանը ցուցաբերած ազգանվեր գործունեության համար նվեր է ստացել «Տոյոտա կամրի» մակնիշի ավտոմեքենա: Շրջանային ոստիկանության պետը նման նվեր է ստացել Ջավախքում «օրինականության եւ սահմանադրական կարգի պահպանման գործին» առավել անմնացորդ նվիրվելու համար:

Թղթով ամրագրված օրենքի եւ իրականության միջեւ

1-ին էջից

Հետազոտության նպատակն է եղել սոցիալ-հոգեբանական հարցումների միջոցով բացահայտել բնակչության տեղեկացվածության աստիճանը վերոհիշյալ օրենքի դրույթներին, ինչ չափով է այն գործում եւ ինչպես է հասարակությունն արձագանքում ծխելու երեւույթին: Այս մասին երեկ ժուռնալիստի տանը տեղեկացրին ծրագրին մասնակից հասարակական կազմակերպություններից «Հոգեբույժների ասոցիացիայի» նախագահ **Ռուբեն Ադուզումցյանը** եւ **Վիկա Եսայանը**:

Հարցմանը մասնակից երեւանի 18-65 տարեկան երկսեռ 1020 քաղաքացիների պատասխանների եզրահանգումներն այսպիսին են՝ բնակչության գերակշիռ մասը տեղյակ է օրենքի՝ մի շարք հասատությունների ծխելու արգելման եւ առանձնացված վայրերի մասին դրույթին եւ վերաբերմունքը դրական է, սակայն սա չի իրագործվում կամ գոնե մասամբ է իրագործվում: Հարցվողներից շատերը բոլորովին ուշադրություն չեն դարձնում, թե ինչքանով են գնվող ապրանքների վրա արտացոլված ծխախոտային արտադրանքի կամ նմուշի որեւէ մասնիկներ, ինչը վկայում է ծխելու երեւույթի գովազդի հանդեպ անտարբերության մասին: Ինչպես նաեւ 18 տարեկանը չլրացած անձանց ծխախոտային վաճառքի կամ բաց տուփերով, հատով ծխախոտի վաճառքի հետ կապված հարցերին:

Հետազոտության մասնակից հոգեբանները այցելել են առողջապահական եւ կրթական հաստատություններ՝ արձանագրելով որոշակի բարվոք վիճակ առողջապահական ոլորտում, որոշ տեղերում երբեմն գործի են դրվել ադմինիստրատիվ նույնիսկ խիստ միջոցներ ընդհուպ աշխատանքից ազատման (սա պայմանավորված է ոչ այնքան օրենքի կիրառմամբ, որքան տնօրենի վերաբերմունքով): Կրթական հաստատությունները անհուսալի վիճակում են, բուհերում եւ նույնիսկ դպրոցներում հանդիպել են ծխող ուսուցիչների անգամ միջանցքներում: Դպրոցներում անց է կացվել ծխախոտի հակագովազդային պատասխանների մրցույթ:

Կատարվո՞ւմ է արդյոք մեր բնակչության մեջ իրագեկում ծխախոտի էկոլոգիական եւ առողջապահական վնասների մասին հարցումը, ինչը բացահայտ անտարբերության է մատնվել: Ըստ այս հետազոտությունների արդյունքների եւ առհասարակ հայ հանրության այսօրվա նկարագրից ելնելով՝ պրն Ադուզումցյանը ամենակարեւոր քայլը համարում է կադրային ճիշտ քաղաքականությունը, որովհետեւ ինչ արժեք ունի ԱԺ ընդունած օրենքները, եթե օրենսդիրը հենց ինքն է խախտում դա, եւ՝ ի տես ամենքիս (օրինակ, խորհրդարանի միջանցքներում ծխող պատգամավորները): Եվ ինչպես կարող ենք կառուցել դեմոկրատական հասարակություն, երբ մեր հանրությունը չի հարգում օրենքը կամ շրջանցում է, ինչպես կարող է:

Ուստի եւ արձանագրում ենք, որ օրենքի ընդունումը անհրաժեշտ, բայց մեզանում դեռեւս պլակատային բնույթ է կրում, որովհետեւ այն արժեվորվում, բովանդակություն ձեռք է բերում միայն իրագործվելիս, որի համար պետք է կատարել ամենադժվարինը՝ փոխել հասարակության մտածողությունը: (Հատկապես, երբ մեր հասարակությունը սկսել է տարոպել վտանգավոր մի ախտով. «մտածել մի բան, ասել ուրիշ բան, անել այլ բան»):

Ս. Ք.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 76 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010- Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562663
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչային ծառայություն / հեռ 582483
Շուրջօրյա լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յոդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER.
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Գիտության թեկնածուներ այլեւս չենք ունենա, կունենանք միայն դոկտորներ

Հեռբոտիական կրթության մասին խոսելիս մեր հասարակության մեջ ամենից շաս շեշտվում է այն հանգամանքը, որ վերջին տարիներին ասպիրանտուական կրթության ձգտող տղաների միակ փափագը զինվորական ծառայությունից ազատվելն է, ինչի համար նրանց ծնողները դիմում են ամեն զոհողության: Աղջիկների դարագայում կարեւոր դեր ունի գիտական ժառանգականությունը՝ եթե հայրդ, քեռիդ կամ մեկ այլ ազգականդ գիտնականներ չեն, ուրեմն մոռացիր ասպիրանտուրայի կամ թեկնածուականի մասին ու մի փորձիր հղարտանալ անգամ իմացածդ հնագույն լեզվով: Այդպես տարեցտարի հեռբոտիական կրթությունը կորցրեց իր նախկին վարկը, որովհետեւ վաճառքի հանվեցին գիտության թեկնածուի ու դոկտորի կոչումները՝ առաջինը կարելի է գնել 4-5 հազար դոլարով, երկրորդը՝ 5-10 հազարով, ըստ գիտության ոլորտում շրջանառվող խոսակցությունների: Վաճառիր ու ներկայացիր միայն դաշտանության օրը՝ վերջում էլ ճոխ բանկետի սեղան գցիր, հանձնաժողովի անդամներին շռայլ նվերներ բաժանելով, ինչքան թանկարժեք, այնքան էլ բարեբեր քո հետագա առաջխաղացման համար, քանի որ առանց այդ կոչումների միջազգային դրամաշնորհներից օգտվելու հնար գրեթե չկա: Ու եթե մի օր լսեք, որ գիտությունների թեկնածուի կոչում է ստացել բուհը մի կերդ ավարտած ձեր թաղամեջը, ծանոթն ու բարեկամը, մի զարմացեք, այլ մտածեք, թե ինչ գներ են մեզանում շուտով սահմանվելու անգլերեն TOEFL, գերմաներեն Test Daf եւ ֆրանսերեն TCF քննությունների համար, քանի որ ասպիրանտուրայի ընդունելության նոր կարգի համաձայն, դիմորդը պարտավոր է օտար լեզվի քննությունը հանձնել բուհի վերջին կուրսում:



Կրթության նախարարությունում երեկ հրավիրված ասուլիսում **Արա Ավետիսյանը** խոսացավ, որ «ընդունելության ժամանակ տղաների եւ աղջիկների համար պայմանների տարբերություն չի լինելու: Մեզ անհրաժեշտ է գիտությունը համալրել անհրաժեշտ գիտելիքներով զինված որակյալ կադրերով, այնպես որ սա անում ենք, որպեսզի մեր գիտությունը սանձա կադրային այն հումքը, որն անհրաժեշտ է գիտության մեջ զարգացումներ ապահովելու համար: Հակառակ դեպքում վիճակը կմնա ոչ գոհացուցիչ»:

Իսկ ինչ է լինելու թեկնածուների հետ, որոնց տված գիտական կոչումը դառնում է «ավելորդ» մի բան հեռբոտիական միջազգային եռաստիճան կրթական համակարգին անցնելու պայմաններում, չէ որ մեր ազնվորեն պաշտպանած թեկնածուն հավասարազոր է դրսի դոկտորի աստիճանին, գուցե մի բան էլ ավելի: «Հայաստանում մինչեւ այժմ գործող ասպիրանտական համակարգը կբարեփոխվի ու համադրելի կդառնա աշխարհում գործող հեռբոտիական 3-րդ աստիճանի՝ դոկտորի հետ: Սա ոչ միայն չի բացառում եռաստիճան համակարգը, այլեւ անալիտիկ ձեւով հասնում է գիտական ավելի բարձր աստիճանների: Մինչեւ ամբողջ կառույցը վերջնական չսահմանենք, նախկին թեկնածուներին գնահատական տալու մասին խոսք լինել չի կարող», ասաց Ավետիսյանը:

Կնվազե՞ն կոռուպցիոն ռիսկերը հեռբոտիական համակարգում հարցին՝ «Որեւէ մեկը չի կարող բացառել, որ կան մարդիկ որոնք բանակից ազատվելու համար ձեւական գիտական աստիճանի են ձգտում»:

Իսկ որտեղի՞ց են ծնվում 4-5 հազար դոլարով ասպիրանտուրա ընդունվելու, թեկնածուական պաշտպանելու, 5-10 հազարով դոկտոր դառնալու խոսակցությունները: «Տվողներից պարզեք, թե ո՞ւմ են տվել, ինչի՞ համար եւ դրանից հետո իրենք ի՞նչ են դառնալու: Ես հարցը կոռեկտ չեմ համարում, ուղղակի գիտություն այդպես չեն մտնում եւ այդպես գիտություն չեն անում: Այս կարգը հենց միտված է ասպիրանտուական կրթությունն այդ ռիսկերից զերծ պահելուն, որպեսզի այդ կարգի խոսակցություններն ավելի պակասեն»:

Կրթության եւ գիտության նախարարության աշխատակազմի գիտության եւ հեռբոտիական կրթության վարչության պետ Արամ Քոսյանը նշեց, որ ընդունելության կարգում «որեւէ նոր բան չկա, նորը միայն ծրագրերն են: Մինչեւ հիմա ընդունվում էին մեր տեղական ծրագրերով, այսուհետեւ՝ միջազգայինով: Քննություններից առաջ 1-2 ամիս նրանք կպատրաստվեն նախապատրաստական դասընթացներում: Մյուս նորությունն այն է, որ նախկինում օտար լեզվի եւ ինֆորմատիկայի քննությունները հանձնում էին հունիսի սկզբին, իսկ հիմա բուհի վերջին կուրսում»:

Այնպես որ, հեռբոտիական կրթության գլխավոր նորությունն առայժմ այն է, որ շուտով կունենանք խելքից դուրս թվով դոկտորներ:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ազգային անվտանգության ռազմավարության փաստաթուղթն ամբողջանում է

1-ին էջից

Փաստաթուղթը հրապարակված է եղել, ըստ պաշտպանության նախարարի հասել է հասարակությանը, ըստ մեզ՝ չի հասել, որովհետեւ բոլորը չեն, որ կարող են ընթերցել «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսը կամ պաշտպանության նախարարության կայքէջը: Փաստաթղթի ստեղծմանը մեթոդաբանական աջակցություն են ցույց տվել Միացյալ Նահանգների եւ ՌԴ համապատասխան մասնագետները, այն նաեւ փորձաքննություն է անցել հեղինակավոր հասարակական կազմակերպություններում (նաեւ միջազգային):

Մեր ակադեմիական գիտնականները, ընդհանուր առմամբ բարձր գնահատելով փաստաթուղթը, մի շարք դիտողություններ էին անում: Վլադիմիր Բարխուդարյանը նշելով, որ գիտության, մշակույթի եւ կրթության ոլորտը վերջին քննարկումներից հետո ավելի է շեշտվել, առաջարկեց ավելի խորացնել շեշտադրումները, ներառել ընտանիքը, կոռուպցիայի դեմ պայքարի բաժինն ընդլայնել: Ըստ Գեորգ Բուսյանի՝ պետք է նախ տված լինեն առարկաները, հետո նրանց գործառույթները, իսկ փաստաթղթի լեզվամտածողությունը ռուսական անվանեց: Նիկոլայ Հովհաննիսյանին, օրինակ, չէր գոհացրել, որ Ժողովրդավարության հետ մեկտեղ խոսք է գնացել պետությունը կայացնելու մասին. «Մեր պետությունը կայացել է, հերիք է, վերջ տվեք», ասաց միաժամանակ դրական համարելով, որ օրինակ, ՆԱՏՕ-ի հարցը շաս էմոցիոնալ չի դրված եւ չի ասված, թե մտնելու կամ չենք մտնելու ՆԱՏՕ: Բացի այդ, փաստաթղթում հավասարակշիռ են Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հետ մեր հարաբերությունների վերաբերյալ մոտեցումները, չեն խանգարում միմյանց եւ փոխլրացնում են: Եվրոպական ուղղությունը լավ է, բայց արեւելյան ուղղությունն էլ չպետք է անտեսել (ի դեմ, հենց Ն. Հովհաննիսյանին Ս. Սարգսյանը քննարկման ավարտին առաջարկեց այդ մասին գրավոր առաջարկ ներկայացնել):

Իր ամփոփիչ խոսքում պաշտպանության նախարարն ու անվտանգության խորհրդի քարտուղարը համաձայն չէր Հայկ Դեմոյանի այն մտքին, թե ԼՂՀ հարցի հետ կապված պետք է ամրագրել Հայաստանի հնարավոր կանխարգելիչ հարվածի մասին. «Ինչ է տալու դա մեզ, մենք կնմանվենք ադրբեջանցիներին, որ ասում են, թե պատրաստ ենք ռազմական ճանապարհով լուծել ղարաբաղյան խնդիրը. որ պատրաստ են, ինչո՞ւ չեն լուծում: Ինչո՞ւ ենք հայտարարում, եթե անհրաժեշտ լինի՝ կհասցնենք այդ հարվածը», ասաց: Ն. Հովհաննիսյանի մտքին էլ արձագանքելով նկատեց, թե մեր պետությունը ստեղծվել է, բայց չի կայացել: Համաձայն չէր նաեւ այն եզրահանգմանը, թե փաստաթղթից ռուսերենի կամ անգլերենի հոտ է գալիս, քանի որ բազմաթիվ, իր խոսքերով՝ «մեծ մասնագետների» ձեռքի տակով է անցել եւ ոճաբանի ետ տվել է: Փաստաթուղթը նախատեսված է արտաքին շրջանառության կամ՝ միայն արտաքին շրջանառության համար (սա սոցիոլոգ Գեորգ Պողոսյանի միտքն էր). այս մտքին ետ անհամաձայնություն հայտնվեց. սա իշխանությունների ծրագիր է, քաղաքական փաստաթուղթ, որից ելնելու է պետության գործողությունների ողջ արհալը: Շաս հարցեր էին բարձրացրել մեր գիտնականները, որոնց մեծ մասին Ս. Սարգսյանն անդրադարձավ, նշելով, որ անհնար է բոլոր կարծիքները համադրել, բայց դրանցից գրավոր տեսքի բերվածները կքննարկվեն հանձնաժողովի նիստում, մինչեւ փաստաթղթի խորհրդարանական քննարկումները:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆ ՎԵՇ

Ընդդիմադիրների դաշտո՞ւմ էլ են աջի վրա կառուցում իրենց քաղաքականությունը

Հարցնում է Հրանտ Խաչատրյանը

Նախորդ օրն ուշ ժամի սանձալով ՍԻՄ նախկին նախագահ Հրանտ Խաչատրյանի անդրադարձը ՍԻՄ-ի եւ իր շուրջը ստեղծված վիճակի ներկա պահին՝ մենք թողել էինք հրապարակելու այսօր: Բայց մամուլն արդեն հրապարակել է, այնպես որ ճիշտ համարեցինք հենց իրեն հարցնել, թե ինչո՞ւ հատկապես հիմա այդպիսի «Հայաստի քաղաքականությանը կողմից»: Նրա ասելով՝ չեն կատարվել այն պայմանները, որ դրել էր իր հրաժարականի ժամանակ. «Որպես երկրի քաղաքացի, որպես գործին առնչվող մարդ՝ հայտարարում եմ մյուս կուսակցություններին եւ հատկապես նրանց, ովքեր շտապել են աջակցություն հայտնել՝ (բաբուխանյանականներին-Մ.Խ.), էդ հարցը ներկուսակցական խնդիր չէ այլեւս, ոչ մեկին չի հաջողվի էդպես փակել. աջին, կեղծիքին եւ բռնությանը էս հանրապետությունում, որպես քաղաքական մեթոդի, պետք է վերջ տվի: Հետո ինչ, որ դատարանները կոռումպացված են, իշխանությունները չեն հետեւում վիճակին: Հիմա ինչ, ընդդիմադիրների դաշտո՞ւմ են սկսում աջի վրա կառուցել իրենց քաղաքականությունը: Ես բազմաթիվ նմանատիպ մեթոդներից կարող էի օգտվել՝ կուսակցությունը մարել...»:

Հ. Խաչատրյանը նաեւ անհամաձայնություն հայտնեց մեկ օր առաջ «Ուրբաթ» ակումբում խոսքով հարությունյանի հայտնած այն մտքին, որը, վերցնելով Հ. Խաչատրյանի ասած մի արտահայտությունը՝ «Քիչ հետո կուսակցությունում կհայտնվեմ փոքրամասնության մեջ», ենթադրում է նրան, թե դա Հրանտի կողմից ներքին դեմոկրատիան, այլակարծությունը չհարգելու փաստ է. «Ճիշտ հակառակն եմ ասել, որ փոքրամասնության մեջ կհայտնվեմ քվեարկության կեղծիքների միջոցով, այլ ոչ թե որպես գաղափարական փոքրամասնություն... Այն գաղափարներով, որոնց ջատագովն եմ, թեկուզեւ որպես երկրի քաղաքացի, փոքրամասնություն չեմ կազմում, իշխանություններն են փոքրամասնություն այս երկրում: Եվ հիմա էլ ընդդիմադիրի կեցվածքով, ուրեմն, վեր կենալ, կեղծիքին աջակցել ու օրինակ բերել, թե ես դեմ եմ եղել ներքին դեմոկրատիային, իհարկե ես չեմ հանդուրժի», խ. հարությունյանին եւ մյուսներին զգուշացրեց Հ. Խաչատրյանը:

Մ. Խ.

«Իշխանությունները ցանկանում են վերարտադրվել եւ գնի առաջ չեն կանգնի»

Սպառված Մինսկի խմբին փոխարինում է եռանախագահների մաքոքային քաղաքականությունը

Արտաքին գործերի նախկին նախարար Ալեքսան Արզումանյանը դժվարանում է արանջատել մեր երկրի վարած արտաքին քաղաքականությունը ներքինից եւ համոզված է, որ արտաքին քաղաքականությունն ընդամենը սպասարկում է ներքին քաղաքականությանը, ինչպես նաեւ այս կամ այն մարդկանց կամ խմբերի շահերին: Ավելի պարզ ասած, արտաքին քաղաքականության ոլորտում մեր երկրի որեւէ զիջում, Արզումանյանի դիտարկմամբ, որեւէ պայմանավորվածության արդյունք է: Ասել է թե մենք զիջում ենք որեւէ բան, իսկ դուք թողնում եք մեր երկրում «մեր ձեւով» ղեկավարենք:

Ղարաբաղյան հարցի կարգավորմանն անդրադառնալով՝ նախկին արտգործնախարարը համոզմունք հայտնեց, որ Մինսկի խմբի ձեւաչափը վերջին մի քանի տարիներին չի գործում, կա միայն եռանախագահների մաքոքային քաղաքականությունը՝ երբեմն ինչ-որ բան են որոշում եւ հրամցնում հակամարտող կողմերին: Ավելին, նախկին արտգործնախարարը համոզված է, որ Մինսկի խմբի պարտությունը բերել է նրան, որ ինչ-որ այլ ֆորմատներ փնտրվեն: Ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզայի կողմից սկզբունքների հրապարակումն ու եռանախագահների հայտարարությունը իրենց իսկ երեւակայության պտղոման մասին նախկին նախարարը համարում է իր ասածի ապացույցն ու երկու երկրներին՝ հատկապես Հայաստանին ներկայացված վերջնագիր: «Այսօր մեզ չի առաջարկվում մի բան, որի շուրջը կարելի է բանակցել: Իսկ առաջարկները մեզ համար անընդունելի են: Ըստ առաջարկների մենք տալիս ենք այն, ինչ ունենք եւ էլ ինչի՞ շուրջ բանակցենք», ասաց Ալեքսան Արզումանյանը: Նա նաեւ դեմ արտահայտվեց խնդրի կարգավորումը ՄԱԿ տեղափոխելուն՝ հավելելով, որ դա չի բխում ոչ Հայաստանի, ոչ էլ Ադրբեջանի շահերից:

Ղարաբաղյան խնդրի շուրջն առաջարկված լուծումը փուլային է, թե՞ փաթեթային, նախկին նախարարի համար կարեւոր չէ. «Հիմա այն փուլն է, որ Հայաստանի իշխանությունները ցանկանում են վերարտադրվել եւ գնի առաջ չեն կանգնի, կփորձեն դա (նկատի ունի խնդրի համար առաջարկված լուծումը-Գ. Գ.) ծառայեցնել իրենց շահերին»:

Այս ամսվա վերջին Մինսկում նախատեսվող Քոչարյան-Ալիեւ հանդիպումից Ալեքսան Արզումանյանն այնքանով ակնկալիք ունի, որքանով որ «ինչ-որ համաձայնության իմիտացիա պիտի լինի, Ռամբույեն չի կարող կրկնվել, Քոչարյանը պարտավոր է ինչ-որ համաձայնության գալ»: Իսկ թե որքանով ակնկալելի այդ առաջխաղացումը մեզ համար դրական կլինի, նախկին նախարարը դժվարացավ ասել: Ավելին, նա համոզմունք հայտնեց, որ «ըստ էության դեռեւս Փարիզում համաձայնությունը կայացել է, մնում է վերջնական ձեւակերպումը»:

Ղարաբաղյան խնդրի կարգավորման համատեքստում նաեւ Ալեքսան Արզումանյանը կարեւորեց այս իշխանությունների հեռացումն ու օրինական իշխանությունների ստեղծումը: «Մի քիչ բանակցում ենք, սպասում ընտրություններին: Հետո այդպես կարելի է այնքան սպասել, մինչեւ Քոչարյանի թոռը նախագահ դառնա», դժգոհեց Արզումանյանը: «Քաղաքացիական անհնազանդություն» շարժման նախաձեռնողներից լինելով՝ Ալեքսան Արզումանյանն անհանդուրժելի համարեց հերթական ընտրությունների անցկացումը, քանի որ վստահ է, որ այդպիսով անհնար կլինի օրինական իշխանության ձեւավորումը: Նախկին նախարարը նշեց, որ պետք է անհնազանդություն ցուցաբերել, «լայն ճակատով պահանջել նախագահի հրաժարականը», որից հետո կկազմակերպվեն օրինական իշխանություններ: Ալեքսան Արզումանյանը հայտնեց, որ եթե հերթական ընտրություններ լինեն, ինքը չի մասնակցելու «պետության կազմակերպած հերթական ֆարսին»: Նա կոչ արեց բնակչությանը հանգիստ չնստել եւ չհանդուրժել հերթական անօրինական ընտրությունների անցկացումը, այլ միանալ «Քաղաքացիական անհնազանդություն» շարժմանը եւ պայքարել:

ԳՈՌԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՌԵԳԻՈՆ

Հետաքննող լրագրողների «Ռեգիոն» կենտրոն

Հոդվածները տպագրվում են «Կոնսորցիումի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում՝ «Conciliation resources» կազմակերպության աջակցությամբ եւ բրիտանական կառավարության ֆինանսավորմամբ:

Հայ եւ ադրբեջանական հասարակությունների կյանքում այսօր կարեւորվում են երեք կարգի խնդիրներ՝ Ղարաբաղյան հակամարտություն եւ նրա լուծման հեռանկարներ, ժողովրդավարական ազատություններ եւ իրավունքներ, սոցիալ-տնտեսական իրավիճակ: Տարբեր հետազոտությունների արդյունքներով իրենց հրատապության եւ մարդկանց համար կարեւորության տեսանկյունից այս խնդիրները տարբեր հերթականությամբ են նշվում, բայց որպես օրենք համարվում են մարդկանց կյանքն անվտանգության գլխավոր հենասյուներ:

Ելնելով այս իրողությունից Հետաքննող լրագրողների «Ռեգիոն» կենտրոնը Ադրբեջանում Խաղաղության եւ ժողովրդավարության ինստիտուտի հետ համատեղ անց է կացնում հայ եւ ադրբեջանցի փորձագետների, այլ մասնագետների տիպային հարցում-հարցազրույցներ: Դրանք հետաքրքրական են հայ եւ ադրբեջանական հասարակություններին հուզող խնդիրների իրական վիճակի համեմատության առումով: Ստորեւ տպագրվող առաջին զույգ հարցազրույցներով մենք սկսում ենք ներկայացնել «Ղարաբաղյան հակամարտություն» թեման: Այստեղ հայ եւ ադրբեջանցի մասնագետները պատասխանում են մեր հետեւյալ ուղղվածության հարցախմբերին՝ «Հակամարտություն եւ հասարակություն», «Հակամարտություն եւ միջնորդներ, աշխարհաքաղաքական շահեր», «Հակամարտություն եւ անվտանգության խնդիրներ», «Հակամարտություն եւ ժողովրդավարացման գործընթացներ»: Հարցազրույցները միաժամանակ լույս են տեսնում նաեւ Բաքվի «Նովոյե վրեմյա» թերթում (www.novoyevremya.com).

«Խաղաղությունն ու պատերազմը իրենց տրամաբանությունն ունեն»

Հարցազրույց ԵՊՀ Տարածաշրջանային ինտեգրացիայի եւ կոնֆլիկտների լուծման կենտրոնի տնօրեն, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Լյուդմիլա Հարությունյանի հետ

- Ինչ տեղ է զբաղեցնում ղարաբաղյան հակամարտությունը Հայաստանի, հայ ազգի եւ հասարակության վրա ունեցած իր ազդեցությամբ:

- ԼՂ հիմնախնդիրը զարգացման տարբեր փուլեր է ունեցել, եւ այդ փուլերում շատ կարեւոր է պետության, հասարակության, ազգի եւ անհատի՝ հայ մարդու տարանջատումը: Ղարաբաղյան հակամարտության առաջին շրջանում ազդեցությունը եղել է ազգի վրա: Խնդիրը հասարակության վրա որեւէ կերպ չի ազդել, որովհետեւ այդ հասարակությունը ԽՍՀՄ կազմում էր եւ նրա կառուցվածքը չէր կարող փոխվել: Պետականության տեսանկյունից՝ ԼՂ հիմնախնդիրն դերը շատ մեծ է: Ղարաբաղյան խնդիրը պետությանը սիրեց գիտակցել, թե ինչ մարտահրավերների առաջ է կանգնելու, մարտահրավերի առաջ հայտնվեց նաեւ ազգը: Պետք է չմոռանանք, որ 20-րդ դարը մեծ նշանակություն է ունեցել հայ ժողովրդի պատմության եւ աղագայի համար, այն սկսվել է մեր ազգի նսեմացմամբ: Այո, 1915թ.-ի Հայոց ցեղասպանությունը ես համարում եմ ազգի նսեմացում: Որպես եղեռնի հիշատակը կրող մարդ, ես այն ընկալում եմ Օսմանյան կայսրության կողմից Արեւմտյան Հայաստանում հայ ազգի աղբելու իրավունքի մերժում: ԼՂ հիմնախնդիրն առաջ եկավ այդ մերժումը մերժելու համար: Երբ հայ ազգը 20-րդ դարի վերջում նորից կանգնեց մերժման առաջ, այն կոնսոլիդացվեց: Տպավոր, ԼՂ հակամարտությունը չլուծվեց, եւ հասարակությունը հայտնվեց «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակում: Այս իրավիճակը բարդացնում է հասարակություն ժողովրդավարացման գործընթացը, հասարակությունը մեծապես տուժեց, քանի որ հնարավոր չէ միաժամանակ կառուցել ե՛ւ պետականություն, ե՛ւ հասարակություն: Պետականության կառուցման գործընթացում զոհվեց հասարակությունը: 1991թ-ին Ազատության հրապարակում դիմելով ժողովրդին՝ ես ասացի. «Իմ հաղթած եւ պարտված ժողովուրդ»: Ղարաբաղյան հակամարտության չավարտված լինելու ամբողջ դժբախտությունն այն է, որ հայ մարդը տվեց այն ամենը, ինչ պահանջվում էր՝ արյուն, կյանք, զոհեր, հարազատներ եւ հաղթեց պատերազմում, սակայն չստացավ այն, ինչ սպասում էր: Ժողովուրդը ղարաբաղյան հակամարտությունը խրամատներում ավարտելուց հետո, այն հանձնեց գործող իշխանություններին, որոնք էլ սկսեցին բանակցությունները: Ես կարծում եմ, որ մինչ օրս մեր ղեկավարները չեն կարողացել արժանավայել գնահատել մեր ժողովրդի հաղթանակի տենչը: Պատահական չէ, որ թաթարներից հետո Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում ամենամեծ թվով հերոսներ տվել է հայ ժողովուրդը: Եղեռնից հետո Հայրենական Մեծ պատերազմը հայերի համար հաղթելու առաջին հնարավորությունն էր: Երկրորդ հնարավորությունը ղարաբաղյան հակամարտության խրամատային փուլն էր: Այս հաղթանակից հետո հայ մարդն ուզում էր, որ իր հաղթանակը առաջին հերթին ճանաչի աշխարհը, իր ղեկավարությունը եւ հետո՝ Ադրբեջանն ընդունի իր պարտությունը: Դա տեղի չունեցավ: Սկսվեց ինֆորմացիոն շրջափակումը, արգելվեց ադրբեջանցիների մասին բացասական արտահայտվելը: Ղարաբաղյան խնդիրը խրամատներում ավարտելուց հետո մենք շատ արագ այն փաթեթավորեցինք, վազեցինք դեպի բանակցությունների սեղան եւ ասացինք՝ մենք հաղթել ենք, ճանաչեք մեր հաղթանակը: Սակայն մեր հաղթանակը չճանաչեցին եւ կոտրեցին ժողովրդի ոգին: Հայ մարդը հաղթել ու վերցրել է այն՝ ինչն իրենից խլել էին, սակայն ամեն անգամ գալիս են եւ նրան փորձում են ասել, որ դա իրենը չի, եւ ոչ ոք չի հիշում, որ պատերազմ է եղել, արյուն է թափվել, զոհեր են եղել: Ղարաբաղյան խնդրում կորցրել է պատմական կարը: Բոլոր պատերազմներից հետո կողմերը կանգնում են շատ լուրջ բարոյական խնդրի առջեւ, երբ խնդիրը ֆոնում չի: Ժամանակակից պատերազմներն ունեն շատ հետաքրքրական առանձնահատկություն. ժողովուրդները պատերազմում են, զոհեր են տալիս, հետո գալիս են օտար մարդիկ եւ ասում են, որ լուծումը սա է: Պատերազմող երկրներն օտարվում են խնդրի կարգավորումից, ինչը մեծ ազդեցություն է գործում հասարակության վրա: Ամեն օր ներարկվում է, որ դու որեւէ ազդեցություն չունես ԼՂ հակամարտության կարգավորման ելքի վրա: Թե՛ 1915թ.-ի Հայոց ցեղասպանության, եւ թե՛ ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցում մենք նստած սպասում ենք, թե ինչ կորոշվի Սենայի ափերում կամ մեկ այլ վայրում:

- Ինչպիսի՞ տնտեսական, մարդկային եւ այլ կորուստներ, եւ ինչպիսի՞ ձեռքբերումներ են եղել ԼՂ հակամարտության արդյունքում:

-Մարդկային կորուստները շատ մեծ են: Ակնհայտ են նաեւ տնտեսական կորուստները՝ գործազրկություն, ցածր աշխատավարձեր, շրջափակում, տարածաշրջանային ծրագրերից դուրս մղում եւ այլն, սակայն ես ավելի մեծ կորուստ եմ համարում այն, որ մինչ օրս չեն հաստատվում մեր աշխարհաքաղաքական կոորդինատները: Մինչեւ 1991թ. մենք գիտեինք, թե որտեղ ենք ապրում, ինչ ենք ներկայացնում մեզանից: Այսօր չի ձեւավորվում ամբողջ տարածաշրջանը: Ղարաբաղյան հակամարտությունը բազուժերի եւ ինչ-որ տեղ տարածքների հավասարակշռություն: Ստատուս քվոն վերաբերում է նաեւ զենքին, եւ վերջապես՝ խնդրի լուծումը կողմերից վերցրել են եւ տվել միջազգային այլաններին: Մինչեւ ղարաբաղյան հակամարտությունը ԼՂ-ն ուներ ստատուս եւ չուներ քվո, այսօր մենք ունենք քվոն, չունենք ստատուսը: Ընդհանրապես ստատուսը որոշում է ժողովուրդը, իսկ ԼՂ-ի ժողովուրդը 1991թ-ին հանրաքվեի միջոցով որոշեց իր ստատուսը: Այսօր հայաստանցիներն ասում են, որ ուրիշ երկրներն էլ թող ճանաչեն Ղարաբաղի կարգավիճակը: Ես կարծում եմ, որ «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակը խաթարել է մարդկանց անվտանգության զգացողությունը: Այսօր ԼՂ հակամարտության բանակցող կողմերը խոսում են տարբեր բաների մասին եւ չեն հասկանում միմյանց: Մեկը խոսում է անվտանգության, մյուսը՝ օկուպացիայի մասին: Որպես կորուս անհրաժեշտ է ընդգծել նաեւ հասարակության բեւեռացումը, երբ ոմանք իրենց կյանքն էին զոհում պատերազմի դաշտում, ոմանք էլ հարստանում էին: Իհարկե, եղան նաեւ ձեռքբերումներ՝ պետականության, բանակի կայացում, ազգի միավորում: Կարծում եմ, որ ամենամեծ ձեռքբերումն այն է, որ հայ մարդն առաջին անգամ ազդարարեց, որ ինքն ազատ է եւ այլեւս զոհ չի: Ես կարծում եմ, որ ղարաբաղյան պատերազմի արդյունքում ձեռքբերումներ ունեցավ նաեւ Ադրբեջանը: Ադրբեջանցիների կոնսոլիդացիային նպաստեց հենց ղարաբաղյան հակամարտությունը: Ադրբեջանցիները սկսեցին մտածել, թե ինչո՞ւ պարտվեցին: Այն, որ ադրբեջանցիները սկսել են մտածել սփյուռք ստեղծելու, սկսել են խոսել փախստականների մասին, դա արդեն դրական ձեռքբերում է նրանց համար:

-Ինչպե՞ս են վերաբերվում մեր երկրների հասարակությունները ստեղծված ստատուս քվոյին, ղարաբաղյան հակամարտության մեջ ո՞ւմ օգտին է «աշխատում ժամանակը»:

- Ղարաբաղյան պատմության ընթացքում ստատուս քվոն առկա է 19-րդ դարի սկզբից, եւ այն անընդհատ խախտվել է: Ղարաբաղն ունեցել է ժամանակավոր ստատուսներ եւ չի ունեցել քվո: Այդ պատճառով էլ Ղարաբաղի ճանաչման խնդիր չի եղել: Ժամանակին, երբ Կովկասի բյուրոն Ղարաբաղը վերցրեց եւ տվեց Ադրբեջանին, ո՞ւմ հարցրեց, ո՞ր այլանին: Իսկ ինչու է այսօր մեզ թվում, որ Ղարաբաղի կարգավիճակը ճանաչելու համար մենք պետք է ինչ-որ մեկին դիմենք: Կարեւոր է նաեւ, թե ինչ էլեմենտներ ունի ստատուս քվոն: Կարծում եմ, որ երկու կողմերի միջեւ ստեղծվել է մարտությունն ընկալելու համար: Հայաստանին թվում է, որ եթե մի օր չոպաշտանի Ղարաբաղին, ապա ղարաբաղցիների ճակատագիրը հարցականի տակ կլինի, անվտանգությունն ապահովված չի լինի: Սակայն մենք պետք է հասկանանք, որ այդ երեխան՝ Ղարաբաղն, արդեն մեծացել է: Խնդիրներ ունի նաեւ Ադրբեջանի հասարակությունը. պարտվողի բարդույթը նրան թույլ չի տալիս ճիշտ գնահատել իրավիճակը: Ղարաբաղում բնակվող իմ ծանոթներից մեկին ես խնդրել էի հավաքել եւ գրի առնել պատերազմին վերաբերող անեկդոտներ: Ամենահետաքրքրականը մի տղայի պատմությունն է: Երեխան դպրոց գնալու ճանապարհին է լինում, երբ գրադը խփում է: Տղան շրջվում եւ ասում է. «Չեմ հասկանում, դեռ 10 տարի դու կարողա խփես, ինչ է, ես դպրոց չե՞մ գնալու»: Երբ այս անեկդոտը պատմեցի իմ ադրբեջանցի գործընկերոջը, նա չհասկացավ ինձ, որովհետեւ նրա վերքերը դեռ աղաղինված չեն: Իմ վերքերն արդեն աղաղինված են, ես կարողանում եմ մտածել երեխայի կրթության մասին: Ադրբեջանի ամենամեծ սխալն այսօր այն է, որ դեռ հայտարարում են, թե պատերազմը շարունակվելու է: Գուցե դա նպաստում է ազգի կոնսոլիդացմանը, սակայն կործանում է մի ամբողջ սերնդի ճակատագիր: Պատերազմն անցյալում է: Ղարաբաղյան հակամարտությունն այլեւս ֆունկցիոնալ չէ, ոչ ՀՀ-ի, ոչ Ադրբեջանի եւ ոչ էլ Ղարաբաղի համար: Այսօր այն ֆունկցիոնալ է, օրինակ՝ ռուսների համար, որոնք փորձում են տարածաշրջանում մեծացնել իրենց ազդեցությունը, եվրոպացիների համար, որոնք փորձում են հաշտեցնել մեզ, վրացիների համար, որոնք մեր հաշվին հարստանում են: Ես նաեւ բլեֆ եմ համարում այն հայտարարությունները, թե պատերազմել են ոչ թե երկու երկրների ժողովուրդները, այլ՝ ղեկավարները: Վերջին հաշվով իրար դեմ պատերազմել են երկու երկրների ժողովուրդները, քարոզչության զոհ են դարձել հենց նրանք: Պատերազմն ունի իր կուռ եւ հզոր տրամաբանությունը: Այն կարող է կայանալ միայն այն դեպքում, երբ բավարար հասունացած է բենամու կերպարը, երբ խնդրի լուծման այլ ճանապարհներ չկան: Իր տրամաբանությունն ունի նաեւ խաղաղությունը: Այն գալիս է այն ժամանակ, երբ ավարտվում է պատերազմը, սպառվում է պատերազմի ներուժը: Այսօր իրականում սպառված է պատերազմի ներուժը, ադրբեջանցիները արհեստական փորձում են այն բորբոքել, ինչը կործանարար է ազգի համար: Ընդհանրապես, ճշմարտությունը կարող է լինել անցյալում, ներկայում, ապագայում, սակայն խաղաղությունը կառուցվում է ապագայի ճշմարտության վրա:

- Կարո՞ղ է ղարաբաղյան հակամարտությունն ունենալ այնպիսի լուծում, որը բավարարի ե՛ւ ադրբեջանական, ե՛ւ հայ հասարակություններին:

- Այո: Այդ լուծումը՝ այս տարածաշրջանում ղարաբաղցու ապրելու իրավունքի ճանաչումն է: Ադրբեջանը պետք է խոսի Ղարաբաղի հետ: Դա է 21-րդ դարի քաղաքակրթության նորմը: Ղարաբաղը հենց այդ լեզվով է խոսում: Ղարաբաղը, որպես անկախ պետություն, շատ ավելի շահավետ է ե՛ւ Հայաստանի ե՛ւ Ադրբեջանի համար, քան նրանցից որեւէ մեկի կազմում: Ղարաբաղի հակամարտությունը ոչ թե հայերի ու ադրբեջանցիների, այլ տարածաշրջանի ձեւավորման խնդիր է:

Հարցազրույցը՝
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ՈՒԵՇԻՐՈՒ

Ադրբեջանցիների եւ հայերի միմյանց մասին պատկերացումներում շատ են առասպելներն ու ստերեոտիպերը

Հարցազրույց խաղաղագետ Զաֆար Գուլիեւի հետ

- Ինչ տեղ է զբաղեցնում ղարաբաղյան հակամարտությունը Ադրբեջանի, ադրբեջանական ազգի եւ հասարակության վրա ունեցած իր ազդեցությամբ:

- Հայերի նախաձեռնած այս հակամարտությունը սկզբից եւեթ մեզ համար ունեցել է մեծ նշանակություն, եղել է ամենահրատապ եւ ցավոտ խնդիրը: Ցավոտ, այդ մասին սիրված ենք խոսել անցյալ ժամանակով, որովհետեւ, ղարաբաղյան հակամարտության ներկա պահի հրատապության, երկրի, հասարակության ու ժողովրդի կյանքի վրա ունեցած նրա ազդեցության տեսանկյունից խնդիրն ավելի ու ավելի է դուրս գալիս հասարակության ազդեցության ոլորտից, կորչում է նրա նկատմամբ հետաքրքրությունը: Դա մեծապես կապված է այն բանի հետ, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը չափազանց ձգձգվեց, որ չկան իրական տեղաշարժեր, իսկ հասարակությունը հոգնել է այդ տանջալից սպասումներից եւ անորոշությունից: Ստեղծված իրադրության համար մեղքի մեծ բաժին ունեն թե՛ Ադրբեջանի, եւ Հայաստանի իշխանությունները: Մեր դեպքում, դեռ այն ժամանակից, երբ երկրում իշխում էր Հեյդար Ալիեւը, Ադրբեջանի իշխանությունները սեփականաշնորհեցին խնդրի լուծման իրավունքը՝ մասնակցությունից դուրս մղելով հասարակությանը եւ հասարակական կազմակերպություններին: Դա մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ Ադրբեջանում հաստատվեց պետության կառավարման ավտորիտար ռեժիմ: Եվ այսօր մենք սիրված ենք պարզապես արձանագրել, որ ղարաբաղյան հակամարտությունը մեծ ազդեցություն չի թողնում ադրբեջանական հասարակության կյանքի վրա:

- Ինչպիսի՞ տնտեսական, մարդկային եւ այլ կորուստներ եւ ինչպիսի՞ ձեռքբերումներ են եղել ԼՂ հակամարտության արդյունքում:

- Հարկ է արձանագրել, որ ղարաբաղյան հակամարտությունը ռազմական հարթությունից այսօրվա «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» վիճակ տեղափոխելուց հետո մարդկային կորուստներն այլեւս զանգվածային բնույթի չեն: Բայց դրանք այսօր էլ կան: Մենք բոլորս էլ շատ լավ գիտենք ռազմաճակատային գծի վրա կատարվող փոխհրաձգությունների մասին, որոնք ոչ միայն զինվորների, այլեւ խաղաղ բնակիչների կյանքեր են խլում: Ինչ վերաբերում է տնտեսական կորուստներին, արդեն Ադրբեջանի համար դրանք ավելի ակնհայտ են: Բռնազավթվել է երկրի տարածքի զգալի մասը, ինչն անհնարին է դարձնում այդ հողերի յուրացումը: Բացի այդ, Ադրբեջանի տնտեսության համար ծանր բեռ են դարձել փախստականների եւ հարկադրական վերաբնակիչների վրա կատարվող ծախսերը: Ավելացնենք դրան նաեւ մեծ քանակությամբ այլ ծախսեր, որոնք Ադրբեջանը սիրված էր կատարել կանոնավոր կերպով: Խոսքն այն, իմ կարծիքով՝ չափազանց մեծ ծախսերի մասին է, որոնք կատարվում են բանակի պահպանման եւ մարտունակության բարձրացման համար: Միեւնույն ժամանակ, վերջին տարիներին Ադրբեջանի իշխանությունները եւ մեր երկրի պատասխանատու քարոզչությունը փորձում են ավելի մեծ ուշադրություն դարձնել ոչ թե ղարաբաղյան հակամարտության մեջ մեր երկրի ունեցած կորուստների վրա, այլ մատնացույց անել տնտեսության ինտենսիվ զարգացումը, հրապարակել տվյալներ, որոնց համաձայն Ադրբեջանը բոլոր տնտեսական ցուցանիշներով տարածաշրջանի առաջատարն է: Ես չեմ կարծում, թե դա ճիշտ ճանապարհ է:

-Ինչպե՞ս են վերաբերվում մեր երկրների հասարակությունները ստեղծված սատուս քվոյին, ղարաբաղյան հակամարտության մեջ ո՞ւմ օգտին է «աշխատում ժամանակը»:

- Այսօրվա իրադրությունը թե՛ բանակցությունների գործընթացի, թե՛ ղարաբաղյան հակամարտության հարցի ընդհանուր վիճակի առումով, ձեռնտու չէ մեր հասարակությանը, Ադրբեջանի քաղաքացիներին: Մեր երկրի իշխանությունների կողմից ղարաբաղյան հակամարտության կարգավորման մեջ մասնակցությունից ադրբեջանական հասարակությանը դուրս մղելու պատճառով հասարակությունը անտարբեր է դարձել: Բացի այդ, հասարակությանն արդեն հոգնեցրել է հակամարտության կարգավորման մեջ իրական տեղաշարժերի բացակայությունը: Իսկ ինչ վերաբերում է այն ենթադրանքը, թե վաղը հնարավոր կլինի անել այն, ինչ չի հաջողվել այսօր եւ երեկ, արդեն հայրենական քարոզչությունը, մի շարք անկախ փորձագետներ եւ Ադրբեջանի բնակչության որոշակի մասը կարծել են եւ այժմ էլ կարծում են, թե «ժամանակն աշխատում է» Ադրբեջանի օգտին: Բերվում է այն փաստարկը, թե Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի տնտեսական առավելությունը անպայման կհանգեցնի նաեւ այդ երկրի նկատմամբ վճռական ռազմական գերազանցության եւ կապիտուլյացիայի բռնազավթված տարածքների վերադարձը: Ես չեմ վիճարկում Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի տնտեսական գերազանցության դրույթը, սակայն չի կարելի դա միարժեքորեն կապել ղարաբաղյան խնդրի հետ: Իմ կարծիքով, «ժամանակն աշխատում է» նրանց օգտին, ովքեր այն օգտագործում են սեփական դիրքերն իրապես ուժեղացնելու համար: Տխուր, մենք տեսնում ենք, որ Ադրբեջանում շատ գործընթացներ իմիտացիոն բնույթ են կրում: Անցած ավելի քան տասը տարիների ընթացքում մենք չօգտագործեցինք նավթային եւ աշխարհաքաղաքական գործոնները, Հայաստանի նկատմամբ մեր երկրի տնտեսական գերազանցությունը ղարաբաղյան հակամարտության մեջ սեփական դիրքերն ուժեղացնելու համար: Իսկ ինչ երաշխիք կա, որ մենք կկարողանանք օգտագործել վերը հիշատակված գործոնները հետագայում: Ես համարում եմ, որ եթե երկրի տնտեսական եւ քաղաքական կյանքում պահպանվեն բացասական միտումները, ապա «ժամանակը չի աշխատի» Ադրբեջանի օգտին: Ընդհակառակը, «ժամանակը կաշխատի» այն իրական պատեհությունների դեմ, որ Ադրբեջանը բաց թողեց Ղարաբաղյան հակամարտությունն իր օգտին լուծելու համար:

- Միմյանց մասին ադրբեջանական եւ հայկական հասարակությունների պատկերացումներում ինչն է ավելի շատ՝ առասպելները, բացասական կանխակալությունները, թե՞ իրականությունից ելնող գնահատականները: Արդյո՞ք ադրբեջանցիները եւ հայերը ճանաչում են իրար:

- Հայ վերլուծաբանների եւ լրագրողների հետ շփումների հիման վրա կատարած իմ սեփական դիտարկումներն ասում են այն մասին, որ գոյություն ունեն մեծաթիվ առասպելներ ու ստերեոտիպեր, ինչ է հայերի եւ ադրբեջանցիների մասին իրական եւ ադեկվատ տեղեկատվությունը: Ձեւավորված ստերեոտիպերից եւ այն թշնամական աուրայից դուրս, որը թեւածում է ադրբեջանցիների եւ հայերի հարաբերությունների վրա ղարաբաղյան հակամարտության բռնկումից ի վեր, մեկմեկու գնահատելու առանձնահատուկ ցանկություն նույնպես չի նկատվում: Ուստի ցանկացած շփումներ, նույնիսկ Ադրբեջանի եւ Հայաստանի առավել ադեկվատ ներկայացուցիչների միջեւ, ընթանում են կայունացած եւ հաճախ ոչ օբյեկտիվ ստերեոտիպերի ճնշման տակ: Բացի այդ, մեր երկրների պատասխանատու տեղեկատվամիջոցները միայն ուժեղացնում են այդ ստերեոտիպերի կենսունակությունը: Այս հարցում թերեւս օգտակար կլիներ ժողովրդական դիվանագիտությունը, բայց այդ էլ չկա: Նման շփումներ հաստատելու ցանկացած երկչոտ փորձ կատեգորվում է թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում:

- Կարո՞ղ է ղարաբաղյան հակամարտությունն ունենալ այնպիսի լուծում, որը բավարարի թե՛ ադրբեջանական, թե՛ հայ հասարակություններին:

- Հազիվ թե: Այսօր թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի հասարակությունները պատրաստ չեն այն բանին, որ ղարաբաղյան հակամարտության մեջ գնան իրական զիջումների: Մեր երկրների հասարակությունները մերժում են նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին առաջարկները: Բացի այդ, առնվազն Ադրբեջանի կողմից, հնարավոր զիջումների պատասխանը գործնականում սպառված է: Ուստի ես չեմ կարծում, թե մոտ ժամանակներում կարելի կլինի գտնել ղարաբաղյան հակամարտության կարգավորման այնպիսի տարբերակ, որը կբավարարի ադրբեջանական եւ հայ հասարակություններին:

Հարցազրույցը՝
ԱԲՊԵՐ ՀԱՍԱՆՈՎԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Ռուսաստանը կսահմանափակի օտարերկրացիների եւ օտար աշխատուժի ներհոսը

Ռուսաստանի Դաշնության Ներգաղթի դաշնային ծառայության փոխնախագահ Վյաչեսլավ Պոսսավնինը BBC-ին տված հարցազրույցում ասել է, որ իր երկիրը թույլ չի տա սեփական տարածքում «էթնիկական միջնատարածքների» գոյացումը: Պատճառաբանությունն այն է, որ եթե երկրի որեւէ բնակավայրում կամ շրջանում օտարերկրացիների բաժինը 17-20 տոկոսից բարձր լինի, «դա կարող է հարուցել տեղացիների դժգոհությունը»:

Նույն գերատեսչության տնօրեն Կոնստանտին Ռոմոդանովսկին ՀՌԲ հեռուստաընկերության եթերում էլ ավելի կտրուկ է արտահայտվել, ասելով, որ Ռուսաստանում «չայնաթաղումներ» (բառացի՝ ջինական հաղթներ) չպետք է լինեն:

«Ազգն» արդեն գրել է, որ Ռուսաստանի տուկանները եւ կրպակները 2007 թ. աստիճանաբար ազատվելու են օտարերկրացի աշխատողներից: Այժմ հայտնի են որոշ մանրամասնություններ: ՌԴ կառավարությունը փորձում է խիստ սահմանափակել երկրում օտարերկրյա աշխատուժի ներկայությունը եւ վերահսկողության տակ առնել անօրինական ներգաղթյալներին:

2007 թ. հունվարի 1-ից միջոցներ կձեռնարկվեն տնտեսական գործունեության առանձին ոլորտներից (առաջին հերթին առեւտրի ոլորտից) օտարերկրացիներին դուրս մղելու համար: Առաջին անգամ կսահմանվեն նախկին ԽՍՀՄ հանրապետություններից աշխատուժի ներհոսի քվոտաներ:

Նախատեսվում է նաեւ օտարերկրացի բանվորների գրանցման հարցում խստացնել գործատուներին ներկայացվող պահանջները: 2007 թ. հունվարի 1-ից ոգելից խմիչքների եւ դեղագործական արտադրանքի առեւտրի ոլորտում օտարերկրացիների բաժինը պետք է իջեցվի զրոյի:

Հունվարի 15-ից մինչեւ ապրիլի 1-ը փողոցային վաճառներում եւ շուկաներում օտարերկրացի աշխատավորների թիվը պետք է կրճատվի 40 տոկոսով:

Ապրիլի 1-ից մինչեւ տարեվերջ վաճառներում եւ շուկաներում օտարերկրացի առեւտրականների թիվը կիսացվի զրոյի:

2007 թ. աշխատելու նպատակով այցագրով Ռուսաստան կարող է մուտք գործել 308 հազար օտարերկրացի:

Իրաքի կառավարությունը կարգադրել է ձերբակալել սունիների հոգեւոր առաջնորդին

Իրաքի կառավարությունը կարգադրել է ձերբակալել երկրի սունիական մահմեդականների հոգեւոր առաջնորդ Հարիթ ալ Դհարիին: Այդ մասին ազգային հեռուստատեսության եթերում հայտարարել է ներքին գործերի նախարար Ջավադ ալ Բոլանին:

Հարիթ ալ Դհարին, որը Մահմեդական հոգեւորականության ընկերակցության առաջնորդն է, ամբաստանվում է ահաբեկչությանն օժանդակելու մեջ: Այս կազմակերպությամբ Ռոյթեր գործակալությունը նշում է, որ Իրաքի ներկայիս կառավարության մեջ մեծամասնություն են կազմում շիաները:

Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, ալ Դհարին ներկայումս գտնվում է Հորդանանում: Նրան ձերբակալելու կարգադրությունն արվեց այն բանից հետո, երբ Բաղդադի արեւմուտքի հսկիչ անցակետերում ավտոբուսների տասնյակ ուղեւորներ (առավելապես շիաներ) նոյեմբերի 15-ին ենթարկվեցին հարձակումների: Հաջորդ օրը բռնարարքները շարունակվեցին: Մասնավորապես հինգշաբթի առավոտյան գնդակահարվեցին Բաղդադի Զայունի շրջանի փոքր բանվորները:

Իսրայելը մերժեց մերձավորարեւելյան կարգավորման եվրոպական ծրագիրը

Իսրայելի ղեկավարությունը մերժում է պաղեստինա-իսրայելական հաշտեցման գործընթացի արագացմանն ուղղված եվրոպական նոր նախաձեռնությունները: Հրեական պետության ԱԳՆ-ում ազգային ռադիոյին տված հարցազրույցում այս կապակցությամբ ասել են, թե «միջազգային ընկերությունն ընդհանուր առմամբ չի պատասխանում Եվրամիության գաղափարները»: Բացի դրանից, Իսրայելը նախընտրում է անմիջականորեն բանակցել Պաղեստինի հետ, իսկ միջնորդությունը «լոկ բարդացնում է գործընթացը»: Արտգործնախարար Ցիպի Լիվնին հայտարարել է, որ «պաղեստինաիսրայելական հակամարտության կարգավորմանն ուղղված ամեն մի նախաձեռնություն պետք է համաձայնեցվի Իսրայելի հետ»: Նա ավելացրել է, որ Իսրայելը «բոլոր անհրաժեշտ միջոցների կիրառմամբ կշարունակի պայքարն ահաբեկչության վտանգի դեմ»:

Նախարարը Պաղեստինի իշխանություններին հորդորել է առավել պատասխանատու դիրք բռնել, ավելացնելով, թե Իսրայելի վերջնական նպատակը «ոչ թե վրեժն է, այլ հաղթության եւ անվտանգության գործընթացի շարունակումը»:

Մերձավոր Արեւելքում Եվրամիության քաղաքականությունը փոփոխելու նախաձեռնությամբ հանդես էին եկել Իսպանիայի, Ֆրանսիայի եւ Իտալիայի ղեկավարները, գտնելով, որ մերձավորարեւելյան կարգավորման «ճանապարհային քարտեզը» հնացած է: Նախաձեռնությամբ առարկվում է անհապաղ դադարեցնել կրակը, Պաղեստինում ձեւավորել ազգային միասնության կառավարություն, կատարել պաղեստինցի կալանավորների եւ իսրայելցի պատանդ զինվորների փոխանակում, սկսել Օլմերտ-Աբբաս բանակցություններ, ինչպես նաեւ Գազայի հատվածում միջազգային ուժեր տեղաբաշխել զինադադարի վերահսկման նպատակով: Պաղեստինցիները ընդհանուր առմամբ կողմ են ԵՄ նախաձեռնությանը:

Իրանը Պաղեստինին 120 մլն դոլարի օգնություն է հատկացրել

Պաղեստինի կառավարությունն Իրանից 120 մլն դոլարի օգնություն է ստացել: Այդ մասին նոյեմբերի 16-ին «Հաարեց» թերթի թղթակցին հայտնել է Պաղեստինի արտգործնախարար Մահմուդ ալ Զահարը: Նրա խոսքերով, Իրանը խոստացել էր շարունակել դրամական օգնության հատկացումը:

2006 թ. ապրիլին Թեհրանը Պաղեստինին 50 մլն դոլարի օգնություն էր խոստացել, որպեսզի փոխհատուցի Արեւմուտքի օգնության դադարեցման հետեւանքով Պաղեստինի կրած կորուստները:

ԱՄՆ-ը եւ ԵՄ-ը օգնությունը դադարեցրել էին տարեսկզբին խորհրդարանական ընտրություններում «Համաս» արմատական խմբավորման տարած հաղթանակից հետո, քանզի «Համասը» չի ճանաչում Իսրայելի գոյության իրավունքը:

Պ. Բ.

Բաց երկտող բանաստեղծական գիտությունների դոկտոր, ոչ հեռու ապագայում գուցե ակադեմիկոս Գառնիկ Անանյանին

«Գրական թերթի» սույն տարվա թիվ 32-ում դուք հրաժարակել եք համառոտ մի թռուցիկ, որտեղ մեղադրում եք անանուն ընդադատներին 1937 չարաբաստիկ թվականի ընդադատության ոգին եւ «կերոը» վերականգնելում: Քաղաքացիական ձեր այդ կեցվածքը կարող էր լինել շահեկան, եթե չլիներ ոչ երկրորդական մի հանգամանք:

1937 թվականից երեսուն տարի անց դուք միջնադարյան ինկվիզիցիայի ոգով եւ «կերոով» սանձնել էիք տխրահռչակ «ընդարկման» հիմնական զեկուցողի դերը, նոյտակ ունենալով ոչնչացնել հայ գրականության կոթողներից մեկը՝ «Այրվող այգեսաններ» վեպը եւ նրա հեղինակին՝ Գուրգեն Մահարուն: Ձեր նոյտակին դուք հասաք մասամբ:

Մենք կորցրինք հեղինակին, բայց ահա օրերս նշվեց վեպի հրաժարակման 40-ամյակը:

Չարժե դիմել ձեր մասնագիտական կամ մարդկային խղճին: Ինչպես 1967 թվականի կախյալ, այնպես էլ մեր անկախ ժամանակներում ձեր մեջ կաղապարված է այն մտայնությունը, թե ձեզանով է պայմանավորված ինչպես սոցռեալիզմի, այնպես էլ արդի հայ գրականագիտական միտքը:

Հ. Գ.- Երկտողս չոտղարկվեց խմբագրություն՝ «մաքուր» մնալու ներքին ինքնապաշտպանական ցանկությամբ, չէր էլ ուղարկվի, եթե նույն «Գրական թերթում» չտպագրվեր ձեր ծավալուն հոդվածը այս անգամ հայտնի հասցեով: Ցեմ ուզում խառնվել բանավեճին, եթե գրական այդ մակարդակը կարելի է անվանել բանավեճ, բայց ինձ զարմացրեց ձեր ցինիզմը: Հոդվածում դուք համարձակվում եք, ի շարս այլ գրերի, խոսել «Այրվող այգեսաններ» աուդոտաֆեի մասին, կարծես վստահ լինելով գրական նոսրացած միջավայրի մանկուրության վրա: Բայց գրականության պատմությունում արձանագրված է, եւ ես մի անգամ էլ բարձրաձայնում եմ, որ «Այրվող այգեսաններ» վեպի գլխավոր ինկվիզիտորն ուրիշ մարդ չէր, այլ մոտակա ապագայում գուցե եւ ակադեմիկոս Գառնիկ Անանյանը:

Այստեղ էին հները բացականչում՝ ով դարձ, ով բարձ..

ԳՐԻԳՈՐ ԱՌԵՄՅԱՆ

«Հայրենիքը կորուսյալ չի լինում»

Այս բառերով ավարտեց իր խոսքը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտ. դոկտոր, պրոֆ. Ատոմ Մելքոնյանն իր ղեկավարած ինստիտուտի՝ Մեսրոպ արք. Աբեղյանի անվան դահլիճում երեկ կայացած նկարչական եւ տեսագրական ցուցահանդեսի ավարտին:

Ինստիտուտի նախաձեռնությամբ, այս տարվա սեպտեմբերի վերջին շուրջ 30 հոգի Երեւանից ուխտագնացության էին մեկնել Արեւմտյան Հայաստան: Ահա այս ուղեւորության ընթացքում հաղված լուսանկարներ (լուսանկարիչ՝ Խորեն Քոթանջյան) եւ 30 բոլեանոց մի տեսաերիզ (նկարահանող՝ Ատոմ Մելքոնյան) ներկայացվեցին դահլիճը բերնեբերան լցված հանրությանը:

Ներկաների մեծ մասը պատմաբան էր, իսկ բոլորը՝ թուրք եւ քուրդ վանդալների «ողորմությանը» հանձնված հայրենիքի կանչով այրվող մարդիկ: Հուզումը համակել էր բոլորին՝ ի տես մեր աննման, այսօր ավերակ հուշարձանների՝ Դարոյնք ամրոց, Նարեկավանք, Վարագավանք... Ցուցադրանքում էին Դերջանի Ամրանից վանքի երեք՝ 6-7 մետրանոց խաչքարերը, հայկական ճանապարհորդության իսկական գոհարներ, որոնցից մեկը հավասարվել է գեսնին՝ գանձախույզ բաշիբոզուկների ձեռքով:

Հույս ունենանք, որ մի օր կիրակնանա Ատոմ Մելքոնյանի եւ ողջ հայության մեծ երազը՝ Արեւմտյան Հայաստանի միավորումը Հայաստանի Հանրապետությանը: Ի վերջո, կորուսյալ հայրենիք չի լինում, եթե այն չես կորցնում քո հոգում եւ քո սերունդների հիշողության մեջ:

Ցուցադրանքը դիտելուց հետո մի անգամ եւս հաստատում ենք լեգենդար Լեոնիդ Ազգալդյանի թեւավոր խոսքը. «Սա Հայաստան է եւ... վերջ»:

ԳԵՂԱՐՈՏ ՅԱՔՈԲՅԱՆ

«Նռան հատիկ»-ը վերջերորդ անգամ

Երեկ Հայաստանի ժուռնալիստի տանը տեղի ունեցավ «Նռան հատիկ-2006» հանրապետական մանկապատանեկան թատերական փառատոնին նվիրված մամուլի ասուլիս: Փառատոնը ստեղծվել է 2000 թ. եւ անցկացվում է արդեն 6 տարի: Փառատոնը կազմակերպել են «Նախաբեմ» մշակութային միությունը, մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը՝ ՀՀ կառավարության օժանդակությամբ:

Փառատոնը կազմակերպելու մտահղացումը Ավ. Իսահակյանի անվան գրադարանի տնօրեն, «Նռան հատիկ»-ի կազմկոմիտեի անդամ Հասմիկ Կարապետյանինն է, ով գտնում է, որ փառատոնի նոյտակը գեղագիտական որակներ ունեցող երեխաների դաստիարակությամբ զբաղվելն է, մշակույթը մայրաքաղաքից դեպի մարզեր տանելը, լավ աղեստագեն եւ լավ հանդիսատես դաստիարակելը:

Փառատոնն անց է կացվում երկու փուլով, առաջինը՝ մարզերում, արդիլ-հուլիսին, երկրորդը՝ Երեւանում նոյեմբերի 20-30-ը: Մասնակցել են 22 թատերախմբեր Հայաստանի մարզերից, մայրաքաղաքից եւ ԼՂՀ-ից, որոնցից 15 լավագույն թատերախմբերը հանդես կգան Երեւանյան բեմահարթակում:

Առաջին անգամ մասնակցում է Գյումրին, այն էլ երկու թատերախմբով, իսկ այս տարի չի մասնակցում Լոռու մարզը՝ չնայած, որ ամենամյա մասնակից էր:

«Նախաբեմ» կրթամշակութային միության պատվավոր նախագահ Եվանդ Մանարյանը ասաց. «Մեր պատմության նոր շրջանում բացառիկ դեպքերից է, որ վերջերորդ անգամ նույն ձեռնարկը կրկնվում է»: Փառատոնը մրցութային չէ, բայց որպես խրախուսական մրցանակ բոլոր թատերախմբերին տրվում է «Թռիչք» արձանիկներ: Մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար, դրամատուրգ Կարինե Խոդիկյանն առաջարկեց, որ հաջորդ տարի եզրափակիչ փուլն անցկացվի մարզերում:

Ողջ միջոցառման համար 2006 թ. պետբյուջեից հատկացվել է 2 մլն դրամ:

Բացումը տեղի կունենա նոյեմբերի 20-ին՝ ժամը 13-ին, Համազգայինի թատրոնում:

ՆԱՌՆ ԲԱԲՄԵՂՅԱՆ,
ՀՊՄՀ կոլտուրայի ֆակուլտետի հեռուստալուսագրության բաժնի 3-րդ կուրս

Վիվասելը կրկին աջակցում է մշակույթի զարգացմանը

Արդեն 16 ամիս է Հայաստան մուտք գործեց Վիվասելն ու սկսեց մեծ ուշադրություն դարձնել մեր երկրի մշակութային զարգացմանը: Երկու տասնյակից ավելի են այն մշակութային ձեռնարկները, որոնց աջակցության ու հովանավորության դժվարին գործն ստանձնել է Վիվասելը: Հավատարիմ մնալով իր որդեգրած սկզբունքներին, նոյեմբերի 20-ին Արմավիրի մարզկենտրոն Արմավիր քաղաքում գործող «Դյուցազն» մարզական եւ առողջական կենտրոնում, որը տարիներ շարունակ զրկված էր ջեռուցման համակարգից ու մասամբ էր միայն գործում, շնորհիվ Վիվասելի վերանորոգված ու ջեռուցվող դահլիճում տեղի կունենա բոդի-բիլդինգի, աերոբիկայի, մարմնամարզության, կարատեի խմբերի ցուցադրական ելույթը: Իսկ նոյեմբերի 21-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կտոնվի Հայաստանի կույրերի միավորման «երաժշտական կոլեկտիվներ» հասույթի 30-ամյակը: 52 հոգուց բաղկացած կոլեկտիվը, որից 38-ը կույր են, վերջերս հայտնվել էր ծանր սոցիալական վիճակում: Երբեմնի բարձր համբավ ունեցող կոլեկտիվը բազմիցս է հանդես եկել արտերկրում ու արժանացել դափնեկրի կոչման: Սակայն ֆինանսների բացակայության պատճառով այլեւս հնարավոր չի եղել շարունակել համերգների կազմակերպումն ու աշխատավարձերի վճարումը: Եվ ահա այստեղ էլ իր օգնության ձեռքը մեկնեց Վիվասելը՝ սանձնելով պրոֆեսիոնալ երգչախմբի ու ժողգործիքների նվագախմբի 3-ամսյա ծախսերը, նվիրաբերելով 2.640.000 դրամ: Ասեմ, որ աշխարհում կույրերի համույթներ կան Բուլղարիայում, Լիտվայում եւ Հայաստանում, որի գործունեությունն ու հետագա ուղին բարձր է գնահատում Վիվասելը:

ՄԱՐԻԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Իտալիան պարգեւատրել է հայազգի ռեժիսոր Կարեն Շահնազարովին

Հոկտեմբերին եւ այս օրերին իտալական Պիզա, Կառարա եւ Հռոմ քաղաքներում ցուցադրվել եւ ցուցադրվում են հայազգի ռեժիսոր Կարեն Շահնազարովի ֆիլմերը: 20 տարի ստեղծագործական աշխատանքի ընթացքում Շահնազարովը հեղինակել է 20 գեղարվեստական ֆիլմ, բայց նրան ճանաչում ու հռչակ բերեց մի քանի միջազգային մրցանակներ նվաճած «Մենք ջազից ենք» երաժշտական ֆիլմը:

Երեկ հայտնի դարձավ, որ Կարեն Շահնազարովն արժանացել է Իտալիայի Gastone Predieri մրցանակին՝ կինոարվեստում եւ մասնավորապես ռուս-իտալական մշակութային կապերի զարգացման մեջ մեծ ավանդի համար:

Ա. Դ.

ՄԱՍՍԱՅՈՒՍԵԹՍ

Գարի Կոշկարյանի գիրքը արժանացել է մրցանակի

Ամեն տարի «Մասաչուսեթսի գրքի կենտրոնը», որը Կոնգրեսի գրադարանի մասնաճյուղերից է, մրցանակներ է շնորհում գեղարվեստական եւ ոչ-գեղարվեստական ստեղծագործությունների համար, որոնք առնչվում են տեղական կյանքին:

Այս տարի առաջին անգամ այդ մրցանակը շնորհվել է առեղծվածային թրիլլեր ժանրի գեղարվեստական մի պատումի, որի հեղինակը հայազգի գրող Գարի Կոշկարյանն է: Նա սովորաբար հանդես է գալիս Գարի Բրեյվր ծածկանվամբ: Անգլերեն լեզվի դասախոս է, եւ իր այս վեցերորդ՝ «Flashback» («Հետադարձ հայացք») վերնագրված գիրքը նվիրել է մորաքրոջ Նեմզար Մկրտչյանին, որը ցնորամտությունից մահացել է մի քանի տարի առաջ:

«Ֆորջ բուխի» կողմից հրատարակված գիրքը բարձր է գնահատել «Փաբլիշերզ ուիքլի» թերթը, որն այն անվանել է «բժշկական թեմայով գրված բացառիկ թրիլլեր»: Իսկ մրցանակը շնորհող հանձնախումբը միաձայն եկել է այն եզրակացության, որ «դինամիկորեն զարգացող եւ հետաքրքրաշարժ սյուժեով այս առեղծվածային սպանությունների հատորը, որի գործողությունները Մասաչուսեթսում են տեղի ունենում, խորամուխ է լինում բարոյահոգեբանական խնդիրների մեջ, եւ վարպետորեն հյուսում է մեքենայությունների մի ցանց՝ կապված Ալցհայմերի հիվանդության առաջն առնող դեղամիջոց գտնելու եւ այդ բիզնեսից շահույթ ստանալու հետ»: Հանձնախմբի անդամները նշել են, որ «թեման չափազանց այժմեական է, գործող անձինք՝ իրական, ծավալվող գործողությունները՝ գրավիչ»:

Մրցանակը հեղինակին է շնորհվել Լենոքսի (Մասաչուսեթս) քաղաքապետարանում հոկտեմբերի 15-ին:

Հ. ՕՈՒԼԻԿՅԱՆ

Ֆրանսահայոց մշակութային միության նոր պատվո նախագահն է Ժան-Պիեռ Մահեն

Մեդալն ստանալուց հետո Ժան-Պիեռ Մահեն իր շնորհակալական խոսքն է ասել հայերենով, ելույթի վերջում մաղթելով ֆրանս-հայկական հարաբերությունների եւ բարեկամության հարատեւություն:

Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Էդվարդ Նալբանդյանն իր ելույթում պրոֆեսորին խորին երախտագիտություն է հայտնել նրա վաստակավոր գործունեության համար:

Պ. Ք.

Ֆրանսահայոց մշակութային միության ընդհանուր ժողովը հոկտեմբերի վերջին միության նախագահի պատասխանում վերահաստատեց Էդմոն Յանեկյանին, իսկ պատվո նախագահ ընտրեց նշանավոր հայագետ, պրոֆեսոր Ժան-Պիեռ Մահեին: Փարիզի «Աշխարհ» թերթը տեղեկացնում է, որ Ժան-Պիեռ Մահեն նաեւ պարգեւատրվել է մայրաքաղաքի 9-րդ շրջանի քաղաքապետարանի մեդալով: Իր ելույթում պրոֆեսոր Մահեն, որը 2001 թվականից Ֆրանսիայի գրականության ակադեմիայի անդամ է, անդրադարձել է գլխավորապես իր հայագիտական հետազոտություններին եւ հայ գրականության կարեւոր նմուշների թարգմանություններին:

Իր հերթին Էդմոն Յանեկյանն ասել է, որ Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակներում Ժան-Պիեռ Մահեն օժանդակել է Լուվրի թանգարանում «Armenia Sacra» ցուցահանդեսի եւ Մարսելում «Հայաստան, գրքի թովչանքը» թեմայով ցուցադրության կազմակերպմանը: Ընդսմին տիկին Անն Մահեն աջակցում է ամուսնու բոլոր նախաձեռնություններին:

«Երազ իմ երկիր»

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի ու պատասխանության նախարարությունները համատեղ մոտակա օրերին կազմակերպելու են ազգամայրենասիրական միջոցառումներ սահմանամերձ զորամասերում: Ծրագիրը կոչվում է «Երազ իմ երկիր»: Ծրագրի նպատակն է հայրենասիրական ոգու բարձրացումը, ինչպես նաեւ զինվորների շրջանում բարոյական բարձր արժեքների տեր լինելու գաղափարի սերմանումը: Ծրագիրը իրականացվելու է Սյունիքի, Տավուշի եւ Գեղարքունիքի երկուական զորամասերում: Ամեն զորամասի ծրագիրը կտեւի 1 օր, ժ. 11-ից մինչեւ երեկոյան ժ. 20-ը: Յուրաքանչյուր զորամասում կազմակերպվելիք ծրագիրը բաղկացած կլինի երկու մասից՝ ինտելեկտուալ-մրցութային եւ համերգային:

Ծրագրի առաջին մասում նախատեսվում է կազմակերպել բրեյք-դանսի, շախմատի, նարդու, ֆուտբոլի մրցումներ, որոնց կմասնակցեն տվյալ զորամասի զինվորները եւ մայրաքաղաքից ժամանած հյուրերը: Բրեյք-դանսին կմասնակցեն մայրաքաղաքից ժամանած եւ տվյալ զորամասից ընտրված 5-ական մասնակից: Բրեյք-դանսի հարցերը կլինեն Հայաստանի վերաբերյալ: Շախմատի մրցույթի համար կհրավիրվի շախմատի ճանաչված վարպետներից մեկը, որը միաժամանակ կխաղա մի քանի խաղատախտակների վրա: Նարդու մրցաշարը կլինի բաց եւ նախօրոք, բոլոր ցանկացողները կցուցակագրվեն զորամասերում:

Ծրագրի երկրորդ մասում տեղի կունենա համերգ: Համերգային ծրագրի ընթացքում լավագույն զինվորներին խրախուսական մրցանակներ կհանձնեն: Ծրագրի վերջում կայանալիք սեմինար-խորհրդակցությունում երիտասարդ հասարակական գործիչների, կառավարական արվեստի ներկայացուցիչների, հոգեբանների, ոլորտի պատասխանատուների մասնակցությամբ կքննարկվեն զինվորի ներկայիս վիճակին վերաբերող հարցեր:

ԼՈՒԻԶ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

Ռոման Բերեզովսկի. «Ուժերս տեղն են եւ մոտ ապագայում չեմ պատրաստվում ելույթներս ավարտել»

Հայաստանի հավաքականի դարպասապահ Ռոման Բերեզովսկին ընթացիկ մրցաշրջանում խաղում էր Ռուսաստանի Դաշնության առաջնության առաջին դիվիզիոնում հանդես եկող մերձմոսկովյան «Խիմկիում»: Փորձառու դարպասապահը դարձավ թիմի առանցքային ֆուտբոլիստներից մեկը՝ մեծ ներդում ունենալով Պրեմիեր լիգայի ուղեգիր նվաճման գործում: Բերեզովսկին դեռեւս գարնանը կանխագուշակել էր, որ թեեւ թիմի կազմի զգալի փոփոխություններին, «Խիմկին» ի վիճակի է Պրեմիեր լիգայի ուղեգիր նվաճել: Ռուսական «Սպորտ էքսպրես» թերթում հարցազրույց է տպագրվել Ռոման Բերեզովսկու հետ, որը ներկայացնում ենք «Ազգի» ընթերցողներին:

- Երբ թիմում հավաքվում են ֆուտբոլային պայքարի բովում թրծված փորձառու ֆուտբոլիստներ, այլ խնդիր, քան մրցաշարի հաղթող դառնալը, թիմի առջեւ չպետք է դրվի: Մեզանից յուրաքանչյուրը վստահ էր թիմի վերջնական հաջողությունում, սակայն այդ մասին բարձրաձայն նույնիսկ միմյանց չէինք ասում, որպեսզի ճակատագրին «չխրտնեցնենք»: Հաջողությանը հավատում էինք նաեւ մրցաշարի մեկնարկում, թեեւ դժվարությամբ ռիթմի մեջ մտանք: Նախապատրաստական շրջանում լուրջ մրցակիցների հետ ստուգողական հանդիպումներ միչ էինք անցկացրել եւ դա խանգարում էր ռեալ գնահատել մեր հնարավորությունները: Սակայն շուտով ամեն ինչ տեղն ընկավ եւ թիմն սկսեց վերելքով հանդես գալ:

- Ինչպիսի՞ նպատակներ էիք հետապնդում՝ պայմանագիր կնքելով «Խիմկիի» հետ. լավ վաստակե՞լ, մնա՞լ Մոսկվայում, վերադառնա՞լ Պրեմիեր լիգա, թե՞ արժանավայել ավարտել ֆուտբոլային գործունեությունը:

- Այն ինչ թվարկեցիք՝ բացառությամբ վերջինի: Ուժերս տեղն են, ուստի ապագայում ելույթներս ավարտել չեմ պատրաստվում: Նաեւ շատ էի ցանկանում խաղալ Անդրեյ Տիխոնովի եւ Վլադիմիր Բեսչաստնու հետ: Ինձ վաղուց էր դուր գալիս սպարտակյան ոճը, երազում էի հանդես գալ նման խաղաոճ ունեցող թիմում: «Խիմկիում» նման հնարավորություն ունեցա:

- «Զենիթից», «Տորպեդոյից» եւ «Դինամոյից» հետո «Խիմկի» տեղափոխվելն արդյոք հետընթաց քայլ չէ՞ր:

- Սկզբնական շրջանում նույնիսկ թիմի անվանումն ինձ համար սարսափելի էր: Սակայն ընթացքում հասկացա, որ հենց նման թիմերում էլ փորձով կարող ես նպաստել փոքրիկ քաղաքներում ֆուտբոլի զարգացմանը: Օրինակ, վերջերս պարգեւատրելով մեր պատանեկան թիմի ֆուտբոլիստներին, տեսնել էր պետք, թե մեզ հետ ինչպես էին փայլատակում նրանց աչքերը: Հասկացանք, որ մեր հաջողությամբ եւ այդ տղաների համար ինչ-որ բան ենք արել: Կարող եմ ասել, որ «Խիմկիում» թիմի նկատմամբ հոգատար վերաբերմունքը պակաս չէ, քան այլ մարզային կենտրոններում:

- Դուք «Խիմկիում» միակ անվանի ֆուտբոլիստն էիք, որ Պրեմիեր լիգայի թիմից էիք տեղափոխվել: Զգացիք տարբերությունը բարձրագույն եւ առաջին դիվիզիոնների միջեւ:

- Իսկույն նկատեցի, որ առաջին դիվիզիոնում եւ խաղադաշտերի որակն էր ավելի ցածր եւ չնչին բացառությամբ, տրիբունաներում հանդիսականների քանակն ավելի փոքր էր: Միայն Կրասնոդարում ու Բելգորոդում էին մեր թիմի հետ հանդիպումներում մեծ թվով հանդիսականներ հավաքվել: Ինչ խոսք, առաջին դիվիզիոնում ֆուտբոլի խաղամակարդակն ու արագությունները ավելի ցածր են: Սկզբում թվում էր, թե հեշտ կլինի այնտեղ խաղալը: Սակայն խաղերի մեկնելիս մշտապես հազարավոր կիլոմետրեր հաղթահարելու արդյունքում մրցաշարի վերջնագծում ֆուտբոլիստների հոգեկան եւ ֆիզիկական հոգնածությունն զգալի էր տալիս: Դրան գումարեք նաեւ այն, որ հարկ էր լինում խոշոր ծախսերով մարզադաշտերից հետո հանդես գալ արհեստական խոտածածկով մարզադաշտում, որին այնքան էլ արագ չհարմարվեցինք: Արժանին պետք է մատուցել թիմի բժշկական անձնակազմին, որը վնասվածք ունեցող ֆուտբոլիստներին արագորեն շարք էր վերադարձնում:

- Բացի կազմի ճիշտ ընտրությունից, նաեւ ի՞նչը նպաստեց «Խիմկիի» հաջողությանը:

- Սկսեմ ուսումնամարզական հավաքների անցկացման վայրի հաջող ընտրությունից: Խորվաթիայում պատրաստվում էինք հանգիստ պայմաններում, մեր գլխավոր հակառակորդներից ոչ ոք մեր կողքին չէր: Ակումբի ղեկավարությունը, մարզչական կազմն էլ մրցաշրջանի ընթացքում կրքերը չէին բորբոքում, կոչերով չէին առաջնորդվում, այլ կոլեկտիվում գործնական մթնոլորտ էին ստեղծել, ինչը եւս նպաստեց հաջողությանը:

- Ուղեգրի նվաճման ճանապարհին եղա՞վ կրիտիկական պահ:

- Կասեի ոչ թե կրիտիկական, այլ վճռորոշ: Դա մեզ կրնկակոխ հետապնդող «Ուրալից» պարտությունն էր Եկատերինբուրգում: Վախենում էի, որ այդ անհաջողությունից հետո թիմը հնարավոր է տեղի տա: Բարեբախտաբար, նման բան տեղի չունեցավ: Վստահ անցկացրինք առաջնության վերջնագիծը՝ հաղթելով ավարտական վեց խաղերում:

- Ե՞րբ վերջնականապես հավատացիք հաջողությանը:

- Առաջին շրջանից հետո, երբ թիմը հարմարվեց մեր խաղադաշտի արհեստական ծածկին: Զգացի, որ հաջողությունը ձեռքներիցս բաց չենք թողնի: Երկրորդ շրջանում սեփական հարկի տակ հաղթեցինք բոլոր մրցակիցներին, այդ թվում գլխավոր հակառակորդ «Կուբանին»:

- Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն են «Խիմկիի» հեռանկարները Պրեմիեր լիգայում:

- Լավ: Ինչ խոսք, թիմի փորձառու ֆուտբոլիստներն իրենց դիրքերը չեն զիջի: Իսկ երիտասարդների համար այս մրցաշրջանն առաջընթացի համար յուրօրինակ ուսնակ հանդիսացավ: Երիտասարդները թրծվեցին, փորձ ձեռք բերեցին եւ զգալիորեն առաջադիմեցին: Այնպես որ Պրեմիեր լիգայի համար թիմը հիմնականում արդեն ձեւավորվել է:

Բեքհեմներն օգնեցին կույր աղջկան

Համաշխարհային ֆուտբոլի ամենահայտնի ամուսնական զույգը՝ Դեյվիդ եւ Վիկտորյա Բեքհեմները հերթական անգամ իրենց մասին խոսել տվեցին: Այս անգամ նրանք աչքի ընկան բարեգործությամբ, որից հետո Spice Girls խմբի նախկին մենեջերուհին բոլորին հիացրեց իր նոր հագուստով: Ըստ որոշ տեղեկությունների, այն ընտանեկան բյուջեին 1000 ֆունտ ստերլինգ է արժեցել:

Ինչ վերաբերում է բարեգործությանը, ապա Բեքհեմներն օգնության ձեռք են մեկնել 7-ամյա կույր երեխային՝ Գրեյս Ուոտինգին: Աղջնակին կյանքի նորմալ գործունեության համար շատ կարգով համակարգչային հատուկ սարքավորում էր անհրաժեշտ, սակայն նրա ծնողներն ի վիճակի չէին դա գնելու: Եվ այդ ժամանակ օգնության եկան Բեքհեմները՝ 10 հազար ֆունտ ստերլինգ հանձնելով նրանց: Աղջնակի ծնողներն անչափ գոհ էին Բեքհեմներից:

Յունգբերգը լավագույնն է Շվեդիայում

Լոնդոնի «Արսենալի» կիսապաշտպան Ֆրեդրիկ Յունգբերգը ճանաչվել է Շվեդիայի լավագույն ֆուտբոլիստ: 29-ամյա ֆուտբոլիստի համար ընթացիկ մրցաշրջանն իրոք հաջող էր: Նա «Արսենալի» կազմում մասնակցեց «Բարսելոնի» հետ չեմպիոնների լիգայի եզրափակիչ հանդիպմանը, իրեն լավ դրսեւորեց նաեւ Շվեդիայի հավաքականում՝ աշխարհի առաջնության հանդիպումներում:

Յունգբերգի նախկին թիմակիցները, ներկայումս դանիական «Կոպենհագենում» հանդես եկող Տոբիաս Լինդերոսը եւ Մարկուս Ալբեկը ճանաչվել են համապատասխանաբար լավագույն կիսապաշտպան ու հարձակվող: Լավագույն պաշտպանի մրցանակը հանձնվել է «Հերենվենի» ֆուտբոլիստ Պետեր Հանսոնին, իսկ դարպասապահներից ուժեղագույն է ճանաչվել «Ֆրեդրիկստադի» դարպասի պահապան Ռամի Շաբանը: Լավագույն մարզչի մրցանակին է արժանացել երկրի չեմպիոն «Էլֆսբորգի» գլխավոր մարզիչ Մագնուս Խագլունդը, իսկ «Էրգրյուտեի» 20-ամյա կիսապաշտպան Օլա Տոյվոնենը ճանաչվել է լավագույն երիտասարդ ֆուտբոլիստ:

ՎՈԼԵՅԲՈԼ

Կանանց փոխարինեցին տղամարդիկ

Վոլեյբոլի աշխարհի կանանց առաջնության ավարտից մեկ օր անց Ճապոնիայում իրենց մրցավեճը սկսեցին տղամարդիկ: Մրցակարգը նույնն է: Սկզբում կանցկացվեն խմբային երկու մրցաշարեր, որոնք ի հայտ կբերեն կիսաեզրափակիչի մասնակիցներին: Առաջին փուլում մասնակից 24 հավաքականները բաժանվել են չորս խմբի: ՌԴ հավաքականն ընդգրկվել է «Դ» խմբում, որտեղ հանդես են գալիս ոչ այնքան ուժեղ հավաքականներ՝ Սերբիան, Ղազախստանը, Թունիսը, Հարավային Կորեան եւ Կանադան: Սակայն ռուսները մեկնարկում անհաջողության մատնվեցին: Ղորան Գայիչի սաները 0-3 հաշվով զիջեցին սերբերին: Նույն խմբում Կանադայի հավաքականը նույնքիսի հաշվով պարտության մատնեց ղազախներին: Կայացած մյուս հանդիպումներում գրանցվել են հետեւյալ արդյունքները. Լեհաստան-Չինաստան՝ 3-0, Պուերտո Ռիկո-Արգենտինա՝ 3-2, Կուբա-Բրազիլիա՝ 1-3, ԱՄՆ-Վենեսուելա՝ 1-3, Չեխիա-Իրան՝ 3-0, Ֆրանսիա-Հունաստան՝ 3-1:

Իտալական Totosi բուքմեյքերական ընկերությունը հաղթողի հիմնական հավակնորդ է համարում Բրազիլիայի հավաքականին: Խաղադույքներն ընդունվում են 1:2,2 հարաբերությամբ: Երկրորդ տեղում ՌԴ հավաքականն է (1:5): Այնուհետեւ գալիս են Իտալիան եւ Սերբիան (1:8), Ֆրանսիան (1:12):

Մրցանակներ լավագույններին

Ճապոնիայում ավարտված վոլեյբոլի կանանց աշխարհի առաջնության ամենաարժեքավոր խաղացողի ընտրությունը շատերի համար անսպասելի էր: Լրագրողների եւ վոլեյբոլի միջազգային ֆեդերացիայի ներկայացուցիչների ընտրյալը 6-րդ տեղը զբաղեցրած Ճապոնիայի հավաքականի վոլեյբոլիստուհի Յոշի Տակեշիտան էր: Նրան հանձնվեց 100 հազար դոլար պարգեւավճար: Աշխարհի չեմպիոն ՌԴ հավաքականի մարզուհիներից մրցանակի արժանացավ միայն Ելենա Գոդինան: Որպես լավագույն մատուցող նա ստացավ 50 հազար դոլար: Հատուկ մրցանակների արժանացան նաեւ ամենաարդյունավետ խաղացող Նեսլիխան Դառնելը (Թուրքիա), հարձակողական ոճի լավագույն վոլեյբոլիստուհի Ռոսիր Դիազը (Կուբա), լավագույն պաշտպան Սյուզանա Ցեբիչը (Սերբիա), հարվածների լավագույն կատարող Քրիստին Ֆյուրստը (Գերմանիա) եւ լավագույն խաղարկող Յոշի Տակեշիտան:

Այժմ էլ Կանավարոն

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Եվրոպայի այս տարվա լավագույն ֆուտբոլիստը պատշաճաբար հայտնի կդառնա նոյեմբերի 27-ին, երբ ավանդաբար հարգում անցկացնող «Ֆրանս Ֆուտբոլ» շաբաթաթերթը կամփոփի արդյունքները: Սակայն մինչ այդ իտալական «Տուտսպորտը» տեղեկացրեց, որ լավագույնի կոչմանն է արժանացել Իտալիայի հավաքականի դարպասապահ Ջանլուիջի Բուֆոնը: Եվ ահա նոր տեղեկատվություն: Ըստ իսպանական լրատվամիջոցների, «Ոսկե գնդակ» մրցանակը հանձնվելու է Իտալիայի հավաքականի մեկ այլ ֆուտբոլիստի՝ Մադրիդի «Ռեալի» պաշտպան եւ իտալացիների ավագ Ֆաբիո Կանավարոյին: Եթե այս տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, ապա Կանավարոն կդառնա համաշխարհային ֆուտբոլի պատմության մեջ 3-րդ պաշտպանը Ֆրանց Բեկենբաուերից եւ Մաթիաս Ջամերից հետո, որ կարժանանա «Ոսկե գնդակին»:

Ֆերենց Պուշկաշը կնքեց իր մահկանացուն

Բուդապեշտում 79 տարեկանում մահացել է հունգարական ֆուտբոլի լեգենդներից մեկը՝ Ֆերենց Պուշկաշը: Անցյալ դարի 50-ական թվականներին նա Եվրոպայի լավագույն հարձակվողն էր համարվում, Հունգարիայի հավաքականի գլխավոր «ասպը»:

Վերջին տարիներին Պուշկաշը տառապում էր Ալցգեյմերի հիվանդությամբ եւ գտնվում էր հիվանդանոցում, որտեղ էլ մահացավ: Լեգենդար ֆուտբոլիստը ծնվել է 1927 թ. ապրիլի 2-ին, Բուդապեշտում: Հանդես է եկել հունգարական «Կիշպեշտ» (1943-1948 թթ.), «Հոնվեդ» (1948-1958 թթ.) թիմերում, հետագայում տեղափոխվել է Մադրիդի «Ռեալ», որի կազմում մինչեւ 1967 թ. հաջողությամբ խաղացել է՝ հանդիսանալով թիմի առաջատար ֆուտբոլիստներից մեկը: Նա «Ռեալի» կազմում անցկացրած 372 խաղում խփել է 324 գոլ, չորս անգամ ճանաչվել է Իսպանիայի լավագույն ռմբարկու, վեց անգամ նվաճել է երկրի չեմպիոնի կոչումը, դարձել է չեմպիոնների գավաթակիր: Իսկ մինչ այդ էլ, Ֆերենց Պուշկաշը հինգ անգամ դարձել էր Հունգարիայի չեմպիոն:

1952 թ. նա Հունգարիայի հավաքականի կազմում դարձել է օլիմպիական չեմպիոն, իսկ երկու տարի անց աշխարհի առաջնությունում արժանացել է արծաթե մեդալի:

Պուշկաշն աչքի էր ընկնում ռմբարկուի իր բնատուր տաղանդով: Նա Եվրոպայի լավագույն ռմբարկուներից մեկն էր: Հունգարիայի եւ Իսպանիայի հավաքականների կազմում անցկացրած 88 խաղում Պուշկաշը խփել է 84 գոլ: Իսկ ընդհանուր առմամբ անցկացրած 533 պաշտոնական խաղում նա 511 գոլ էր խփել: Պատահական չէ, որ ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիայի դասակարգմամբ Ֆերենց Պուշկաշը 20-րդ դարի լավագույն ֆուտբոլիստների ցանկում զբաղեցրել է 4-րդ տեղը:

Միակ թեկնածուն Բրազիլիան է

Ինչպես հայտնի է, ֆուտբոլի աշխարհի 2014 թ. առաջնությունն անցկացվելու է Հարավային Ամերիկայում: Օրերս այդ աշխարհամասի ֆուտբոլի կոնֆեդերացիայի կոնգրեսում բոլոր 10 երկրների ֆեդերացիաներն էլ քվեարկել են Բրազիլիայի օգտին: Այս մասին տեղեկացրել է Բրազիլիայի ֆեդերացիայի նախագահ Ռիկարդու Տեյշեյրան: Նա նաեւ հերքել է այն լուրերը, թե իբր Կոլումբիան ցանկություն է հայտնել իր մոտ կազմակերպել առաջնությունը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Պետություն չենք դառնում, որովհետև չինովնիկը քի՞չ է վարձատրվում

Բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձերը 40 տոկոսով բարձրացնելու հարցը խորհրդարանական ուժերը, բացի հանրապետականներից, «Գործարարից» եւ «Ժողովրդավարից», տարբեր ձեւակերպումներով անընդունելի համարեցին: ՄԱԿ-ն ուղղակի չէր ներկայացել խորհրդարանական քննարկումներին հաջորդող ճեպազրույցներին: ՀՀԿ ղեկավար Գալուստ Սահակյանի կարծիքը բանաձեւով արտահայտվեց. «Եթե ուզում ենք պետություն դառնալ՝ չինովնիկը պետք է բարձր աշխատավարձ ստանա: ԳՈԵԿՈ-ի պահանջն էլ է դա եւ կօգնի կառավարման մեջ ներգրավել ավելի բանիմաց մասնագետների»: ՀՅԴ-ն դեմ է, եթե այն չի զուգահեռվում սոցիալապես անապահով խավին տրամադրվող գումարների բարձրացման հետ: Այդ դեպքում էլ կարեւորում է բարձրաստիճանների եւ մյուսների աշխատավարձերի ու նպաստների ավելացման համամասնությունը: «Եթե հիմնավորումը կոռուպցիայի դեմ պայքարն է, ապա հեռու եմ այն մտքից, թե 1000 դոլարին մոտ աշխատավարձ ստացող դասակարգական համակարգը փայլում է կոռուպցիայից հեռու լինելու առումներով: Բարձրաստիճան պաշտոնյայի սպեցիֆիկ գործունեության եւ իր աշխատավարձի բարձրացման չափերը անհամեմատելի են», երեկ ՀՅԴ խմբակցության մոտեցումը հիմնավորեց պատգամավոր **Սպարապետ Սեբաստյանը**՝ հավաստիացնելով, որ պիտի դեմ լինեն նման նախաձեռնություններին: ՀՅԴ-ից բացի նաեւ «Արդարությունը», «Ազգային միաբանությունը» ոգեւորված չեն բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձի բարձրացման շաբաթ մոտ հեռանկարով: «Արդարության» ղեկավար **Ստեփան Դեմիրճյանը** դեմ չէ, որ աշխատավարձերը բարձր լինեն, բայց հավատացած է, որ Հայաստանի համար այդ անելը վաղաժամ է. «Չի կարելի այդ քայլին գնալ, երբ երկրում միջին կենսաթոշակի չափը չի հասնում նվազագույն կենսապահովման զամբյուղին, բարձրաստիճան պաշտոնյաներն էլ իրենց դիրքն օգտագործում են գործ դնելու համար»: Նույն ակնհայտ ճշմարտությունը շեշտեց նաեւ ՀՅԴ ներկայացուցիչ **Հրայր Կարապետյանը**՝ զարմանալով, թե կոռուպցիայի դեմ պայքարը նպաստակային դարձնելու ԳՈԵԿՈ-ի 24 պահանջներից ինչու հենց բարձրաստիճանների աշխատավարձին առնչվողն է մեծ պարտաճանաչությամբ կատարվում: Մինչդեռ «Ժողովրդավարը» զուր է համարում գնահատականը, թե պայքարը կոռուպցիայի դեմ հենց ընդդատվող 40 տոկոս բարձրացմամբ է սկսվում եւ վերջինը, **Մկրտիչ Մինասյանի** հավաստմամբ, բացատրված ու տեղին է համարում, քանի որ կարող է պարկեշտ անձանց հեռու պահել կոռումպացվելուց: Նույն հիմնավորմամբ «Գործարարի» համար ուղղակի անխուսափելի անհրաժեշտություն է բարձր աշխատավարձով բարձրաստիճան պաշտոնյաներ ունենալը, հատկապես որ նրանց տրամադրվող գումարը առանձնապես մեծ չի, որպեսզի ծածկի արժանապատիվ կենսաթոշակների խնդիրը: Այսպես է գտնում նաեւ ՀՀԿ ղեկավարը:

«Արդարությունը» դիմելու է ՍԴ

«Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրինագիծը մեծ համառությամբ երկու ընթերցմամբ ընդունեցին, եթե այն երրորդ ընթերցում էլ անցնի, ապա կդիմենք Սահմանադրական դատարան: Համարում ենք, որ օրենքում կան սահմանադրությանը հակասող կետեր», հայտարարեց «Արդարության» ղեկավարը:

Ընդդիմությունը ի զորու չի գտնվի 200 ընտրական հանձնաժողովում ներկայացուցիչ նշանակել

Ընտրական հանձնաժողովներում ընդդիմության տեղերը վաճառելու մասին ՀՀԿ անդամ Գագիկ Մինասյանի հայտարարությանն անդրադարձ եղավ, եւ ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը** համակարծություն հայտնեց ու փաստարկեց, որ ընդդիմադիր ուժերից կգտնվեն այնպիսիները, որոնք ի վիճակի չեն լինի 200 ընտրական հանձնաժողովներում ներկայացուցիչ նշանակել: «Ազգային միաբանության» ղեկավար **Արտաշես Գեղամյանը** հակադիր մոտեցում ունի. «Եթե Գագիկ Մինասյանը մասնակցել է ընդդիմության հետ տեղերի վաճառին՝ ինչու չի դիմել դատարան: Կամ եթե չի մասնակցել, ինչու է զրպարտում»: Գալուստ Սահակյանի պատասխանը, Գեղամյանի գնահատմամբ, իշխանության նպի խորտակմանը զուգընթաց հումորի պահպանման դրսեւորում է:

Գեղամյանի իրականությունն այլ է

«Ազգը» երեկ Արտաշես Գեղամյանից ոչ միայն ելույթների ու ճառերի ժողովածուներ նվեր ստացավ, այլեւ խորհրդարանական ճեպազրույցներին ականջալուր եղավ վերջինիս շնորհակալությանը «մեկ անգամ եւս «Ազգային միաբանություն» կուսակցության մոտեցումների դրդռդազանդման համար»: Այնուհետեւ հրապարակային ելույթներով եւ դրանք տպագրելու հետեւողականությամբ հայրենի քաղաքական դաշտում առանձնացող Արտաշես Գեղամյանը, թերեւս, իր իսկ կողմից մատնանշված ռուսական կրթության արդյունքում ունեցած անտեղյակությունից **«Ազգ»** օրաթերթին ու գլխավոր խմբագրին մեղադրեց Ալլահին դավանելու մեջ՝ չխորհելով օգտվել երեկ **«Ազգ»**-ում լույս տեսած հոդվածի համատեքստից նախադասությունը կտրելով այն խեղաթյուրելու հնարքից, որի համար մեկ անգամ չէ, որ հարկ է համարել մեղադրել լրագրողներին: Սիրահոժարաբար տեղեկացնում ենք, որ հայ գրականության մեջ ընդունված է փառք տալ Ալլահին՝ քամահրանք, հեգնանք արտահայտելիս: Նույն սիրահոժարությամբ ընդգծում ենք, որ ճառախոս բառը ամենեւին էլ սխորդաս չէ հայերենում առկա մյուս հոմանիշներին, որոնք, ըստ ամենայնի, պարոն Գեղամյանի համար առավել նախընտրելի են, բայց դա չի կարող որեւէ մեկի համար պարտադրանք կամ թելադրանք դառնալ: Եվ արդեն որպես հայաստանաբնակ, ընտրող, բնականաբար ոչ սիրահոժարությունից դրդված, տեղեկացնում ենք, որ պատգամավորի գործը հրապարակային ելույթներ ունենալով եւ մոտեցումներ ներկայացնելով չի սահմանափակվում, ինչին պարոն Գեղամյանի տեղյակությանը կասկածելու հիմք նկատեցինք նրա իր իսկ որակմամբ մտերմիկ ներածականում. «Ես հասկացել եմ՝ պատգամավորի առաքելությունն է իր քաղաքական մոտեցումները հրապարակայնորեն ասել, մասնակից դառնալ օրենսդիր աշխատանքներին: Հակաճգնաժամային ծրագիրը ոչ այլ ինչ է, քան բյուջեային սահմանադրություն: Այստեղ գրանցված են բոլոր այն մոտեցումները, որոնք «Ազգային միաբանությունը» իշխանության գլուխ գալու դեպքում պատրաստ է իրականացնել»: Մինչ այդ, ինչպես երեւում է, սեփական գործունեությունը սահմանափակում է ճառախոսության շրջանակներում, որին ի դեմ չենք անդրադառնում, բայց ամենայնս տեղյակ ենք:

Ն. Պ.

online SERVICE

Երեւան, Նալբանդյան 50
50 Nalbandian st., Yerevan
56 42 74, 54 34 86

▼ Ծախսանյութերի, կազմտեխնիկայի պահեստամասերի վաճառք:
▼ Պատճենահանման սարքերի, տպիչների, ֆաքսերի, մոնիթորների նորոգում:
▼ Պատճենահանման սարքերի, լազերային եւ շիթային տպիչների լիցքավորում:
▼ Կազմտեխնիկայի (այդ թվում օգտագործված) առք եւ վաճառք:
▼ Քարթրիջների լիցքավորում:

CARTRIDGE EPSON HEWLETT PACKARD Canon LEXMARK

☎ 564274, 543486

Ուժը կորցրած է ճանաչվել «Էվրիկա-999» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման ԳԳ-Ե 031 լիցենզիան

Կենտրոնական բանկի խորհրդի նոյեմբերի 7-ի թիվ 646 Ա որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել «Էվրիկա-999» ՍՊԸ-ի (ք. Երեւան, Մատենադարանի փողոց 42 ա) գրավատան կազմակերպման ԳԳ-Ե 031 լիցենզիան՝ իր դիմումի համաձայն:

Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանվել է, որ սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից գրավատունն իրավունք ունի կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք կապված են մինչեւ լիցենզիայի գործողության դադարեցումը ծագած ընկերության պարտավորությունների կատարման հետ:

«Էվրիկա-999» ՍՊԸ-ի եւ ֆիզիկական անձանց միջեւ կնքված վարկային եւ պահատվության պայմանագրերը կարող են սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից կողմերի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվել՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի 1-ին մասի, վարկառուների կողմից վերցված վարկը եւ մինչեւ պայմանագրի լուծման պահը դրա դիմաց սահմանված տոկոսները մարելուց, պահատվության պայմանագրի դիմաց վճարումները կատարելուց՝ ներառյալ գույքի պահատվության հետ կապված գրավատան կրած սովորական եւ արտակարգ ծախսերը հատուցելուց եւ գրավատան կողմից որպես գրավ կամ ի պահ ընդունված գույքը վերադարձնելուց հետո:

Ուժը կորցրած է ճանաչվել «ՀՍԿ» գրավատուն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման ԳԳ-Ե081 լիցենզիան

Կենտրոնական բանկի խորհրդի 07 նոյեմբերի 2006 թվականի թիվ 659 Ա որոշմամբ «ՀՍԿ» գրավատուն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման ԳԳ-Ե081 լիցենզիայի գործողությունը տուգանք կիրառելուց հետո երկու տարվա ընթացքում երրորդ անգամ տուգանքի կիրառման համար հիմք հանդիսացող խախտում թույլ տալու հիմքով ճանաչվել է ուժը կորցրած:

Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանվել է, սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից գրավատունը իրավունք ունի կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք կապված են մինչեւ լիցենզիայի գործողության դադարեցումը ծագած ընկերության պարտավորությունների կատարման հետ:

«ՀՍԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության եւ ֆիզիկական անձանց միջեւ կնքված վարկային եւ պահատվության պայմանագրերը կարող են սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից կողմերի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվել՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի 1-ին մասի, վարկառուների կողմից վերցված վարկը եւ մինչեւ պայմանագրի լուծման պահը դրա դիմաց սահմանված տոկոսները մարելուց, պահատվության պայմանագրի դիմաց վճարումները կատարելուց՝ ներառյալ գույքի պահատվության հետ կապված գրավատան կրած սովորական եւ արտակարգ ծախսերը հատուցելուց եւ գրավատան կողմից որպես գրավ կամ ի պահ ընդունված գույքը վերադարձնելուց հետո:

ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՊՁԲ-06/17» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«Պետության կարիքների համար ավտոմատ անալիզատորների ձեռքբերման» նպատակով**: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Ամերինֆոբանկ», «Էրեբունի» մասնաճյուղ Հ/Հ 247230090091 «Գոհակ» ՍՊԸ-ի հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Վ. Հովհաննիսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10.00-ն:

«ԻՆՆԱ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն «Ադամանդ» ԵԱՀԲ-ի հարթակում կազմակերպում է «Վանաձորի ՋԷԿ» ՊՓԲԸ-ին պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- շինություն թիվ 1, մակերեսը՝ 146,8 քմ, մեկնարկային գինը՝ 660.000 դրամ,
- շինություն թիվ 2, մակերեսը՝ 89,0 քմ, մեկնարկային գինը՝ 380.000 դրամ:

Հասցե՝ ՀՀ, Վանաձոր, էլեկտրաֆիկացիայի 12:

Աճուրդի փուլերը դասական, 18.12.2006 թ. յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժ. 13:00-ից մինչեւ 01.06.2007 թ.՝ Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Բորսա՝ հեռ. 56-31-15:

ԿԲ-ն տեղեկացնում է

Կենտրոնական բանկի նախագահի նոյեմբերի 15-ի որոշմամբ գրանցվել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Նորք-Մարաշ» մասնաճյուղը, որը գործելու է ք. Երեւան, Նորք-Մարաշ համայնք, Նորքի 8 փող. 1/3 հասցեում:

ԿԲ մամուլի ծառայություն

www.azgdaily.com

ՀԱՍՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ քաղաքացիական օդանավատորմի կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ քաղաքացիական օդանավերի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, ծանուցվում է ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին համայնքում «Պարգեւ եւ Վարդան» ՍՊԸ-ի կողմից շահագործվող «Ջոր-Ջոր» ՀԷԿ-1-ի Որոտան գետի Ջոր-Ջոր վտակից՝ առավելագույնը 200,0 լ/վրկ քաղաքացիական թռիչքների նախագծեր:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ քաղաքացիական օդանավերի կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2006 թ. նոյեմբերի 24-ին, ժամը 16:00, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ քաղաքացիական օդանավերի կառավարման գործակալություն

Հայտարարություն

Դեկտեմբերի 1-ին տեղի կունենա «Անի» ԲԲԸ ընդհանուր ժողով, օրակարգում՝ «Անի» ԲԲԸ-ի գույքի եւ բաժնետոմսերի գրավադրման հարցը:

Հասցեն՝ Շիրակի մարզ, գյուղ Նորաբերդ

Ի գիտություն հասարակությանը

«Սմբուլ» ՍՊԸ-ն դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ ՀՀ Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքում Սմբուլյան աղբյուրների վրա «Սմբուլ» ՄՀԷԿ-ի կառուցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

«Սմբուլ» ՍՊԸ, հեռ. 093 394377, 96 2-26

ՕՐՎԱԳԻՐ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 17.11.2006, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Գինդ» տպագրատանը: